

ԱԶԴԱԳԻՐ

(ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ) Փակ Բաժնետիրական Ընկերություն

թողարկողի ֆիրմային անվանումը (անուն, ազգանունը)

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպական - իրավական ձևը

0043, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Շիրակի 2/2, հեռ. (37410) 46-01-01,

Էլ. փոստ՝ shen@shenholding.com, ինտ. կայքը՝ www.shenholding.com

գտնվելու վայրը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)

արժեթղթերի դասը՝

արժեթղթերի ձևը՝

դոլարային արժեթղթերի քանակը՝

դրամային արժեթղթերի քանակը՝

դոլարային արժեթղթ. անվան. արժեքը (արժույթը)՝

դրամային արժեթղթ. անվան. արժեքը (արժույթը)՝

դոլարային արժեթղթ. ընդհ. անվան. արժեքը՝

դրամային արժեթղթ. ընդհ. անվան. արժեքը՝

անվանական, արժեկտրոնային պարտատոմս

Ոչ փաստաթղթային

50 000 հատ

25 000 հատ

100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար

10 000 (տաս հազար) ՀՀ դրամ

5 000 000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար

250 000 000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՄԿՈՒԹՅՈՒՆԸ»:

ՊԱՏԱՄԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործարքը ենթադրյալորեն ներառում է միայն հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկագրության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և յիարժեք չեն, չեն պարունակում և չեն պարունակում և չեն պարունակում և չեն պարունակում»

ստորագրող անձինք՝

Սամվել Բեգլարյան	խորհրդի նախագահ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Պապ Բաղայան	խորհրդի անդամ/ գլխ. գործ. տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գագիկ Եղիազարյան	խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Թաթևուկ Մովսիսյան	խորհրդի անդամ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սերգեյ Դուրախանյան	Ֆինանսական տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի, կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

Պապ Բաղայան	խորհրդի անդամ/ գլխ. գործ. տնօրեն		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.



ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 3

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 11

Ռիսկային գործոններ 11

Հիմնական տեղեկատվություն 11

 1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը: 11

Տեղեկատվություն կապված առաջարկվող արժեթղթերի հետ 12

Առաջարկի ժամկետները և պայմանները 15

 1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար 15

 2. Տեղաբաշխման պլանը 16

 3. Առաջարկի զինը 16

 4. Տեղաբաշխումը 17

Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 17

ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 19

Անկախ աուդիտորները 19

Ռիսկային Գործոններ 19

Տեղեկատվություն թողարկողի մասին 20

 Թողարկողի պատմություն և զարգացումը 20

 Ներդրումները 21

Բիզնեսի նկարագիրը 21

 Հիմնական գործունեությունը 21

 Հիմնական շուկաները 22

Թողարկողի կառուցվածքը 23

Թողարկողի հիմնական միջոցները 23

Զարգացման վերջին միտումները 25

Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը 26

Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 26

Կառավարման մարմինների գործունեությունը 36

Հսկող անձինք 36

Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 36

 1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն 36

 2. Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն 37

 3. Թողարկողի ֆինանսական ֆիճակի էական փոփոխությունները 37

 4. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն 37

Լրացուցիչ Տեղեկատվություն 38

 1. Կանոնադրական կապիտալը 38

 2. Կանոնադրությունը 38

Էական պայմանագրերը 38

Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը: 39

Այլ տեղեկատվություն 39



ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթեթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:

1. Պարտատոմսերի թողարկող է հանդիսանում «Շեն Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ (այսուհետ՝ նաև Ընկերություն), գրանցման համարը՝ 269.130.01032: Ընկերությունը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում: Ընկերության կապի միջոցներն են՝ հեռ. (374 10) 460 101, ֆաքս (374 10) 460 101, էլ.փոստ՝ shen@shenholding.com, ինտերնետային կայքը՝ www.shenholding.com, ընկերության կազմակերպչաիրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն:

Թողարկողին առնչվող հարցերի դեպքում կարելի է դիմել Ընկերության ֆինանսական տնօրեն Սերգեյ Դուրախանյանին՝ հեռ. (374 93) 690909 կամ ներքին ատղիտոր Արմեն Բալասանյանին՝ հեռ. (374 93) 413982:

«Շեն Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է «Շեն Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը հանդիսանում է «Շեն Կոնցեռն» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որն էլ իր հերթին հանդիսանում է «Հայթեսուրսիմպլեքս» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդը:

Ընկերությունը հանդիսանում է նաև «ՀԱՆԹՍՄԱՆ ԲԻՆԴԻՆԳ ՓՐՈԴԱԶԹՍ» ՍՊԸ-ի, և «ՇԵՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ի իրավահաջորդը, որոնք միացել են Ընկերությանը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5.464.000.000 (հինգ միլիարդ չորս հարյուր վաթսուչորս միլիոն) ՀՀ դրամ՝ 478100 հատ սովորական անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով և 68300 հատ հաստատագրված շահութաբաժնով, կումուլյատիվ, մարվող արտոնյալ բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն զբաղվում է շինանյութերի, ներկերի, չոր շաղախների, մածիկների և կապակցող նյութերի, բետոնե բլոկների, մայթերի եզրաքարերի արտադրությամբ, զուգահեռ իրականացնում է ցեմենտի և մետաղների վաճառք, շենքերի ներքին և արտաքին հարդարման ու վերանորոգման աշխատանքներ, դրանց համար անհրաժեշտ ապրանքների ձեռք բերում և տեղադրում, Օգտակար հանածոների արդյունահանում և այլն:

- 2007թ-ին 35% մասնաբաժնով Շեն-Ջորջիա ընկերության հիմնադրում: Վերջինիս միջոցով ձեռք է բերվել արտադրական 1.0հա հողամաս և դրա վրա կառուցվել և շուրջ 3.5 տարի աշխատում է սալիկի սուսինձի արտադրամասը: 2015թ-ի վերջին սկսվեց կառուցվել չոր շաղախների արտադրության 2-րդ հոսքագիծը,
- 2007թ.-ից «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն գործունեություն է ծավալում նաև տեքստիլի ոլորտում՝ բացելով «Շեն Տեքստիլ» մասնագիտացված խանութ-սրահը, որտեղ ներկայացված են եվրոպական վարագույրներ՝ իրենց աքսեսուարներով, քիվեր, անկողնու և լոգարանի տեքստիլ պարագաներ և այլն:
- 2009թ.-ից Ընկերությունը սկսել է նոր գործունեություն՝ եվրոպական երկրների կերամիկական սալիկների, սանիտարական կերամիկայի, դեկորատիվ ներկերի, պաստառների ներմուծում և վաճառք: Նշված արտադրատեսակները Ընկերությունը ներկայացնում է «Շեն-Դեկոր» մասնագիտացված խանութ-սրահում:
- 2009թ.-ին ձեռք է բերվել Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս ՍՊԸ-ն (միացել է Ընկերությանը 2012թ-ի դեկտեմբերին), որն Երևանի Արցախի 49 հասցեում ունի 4.0 հա սեփական արտադրական տարածք՝ հազեցած արտադրական մասնաշենքերով և բետոնի արտադրման հոսքագծով,
- Նույն հասցեում Ընկերությունը 2012թ-ին կառուցել է բետոնե բլոկների արտադրության 2-րդ արտադրամասը (առաջինը կառուցվել է 2005թ-ին)
- Շեն Գրուպ ՓԲԸ-ի (միացել է Ընկերությանը 2012թ-ի դեկտեմբերին) միջոցով բացվել է գիպսի հանք, որի գնահատված պաշարները կազմում են 32.0 մլն տոննա գիպս: Գիպսի հանքին կից կառուցվել է գիպսի վերամշակման 2-րդ արտադրամասը,

- Վեղի քաղաքում 2010թ-ից գործարկվեց կավիճի և ավազի վերամշակման արտադրամասերը, որոնց համար հումքը մատակարարվում է Ընկերության Արարատի մարզի կավիճի և ավազի հանքերից:
- Վեղի քաղաքում 2015թ-ից գործարկվեց ևս մեկ նոր արտադրամաս՝ կրաքարի այրման և հանցցման արտադրամասը,
- 2015թ-ին Արցախի 49 հասցեում սկսեց գործարկվել պեոլիտի փքեցման հոսքագծը,

Ընկերության իրականացրած բազմատեսակ գործունեությունը հիմնականում առնչվում է շինարարության ոլորտին և կարելի խմբավորել հետևյալ ուղղություններով:

- Հանքարդյունաբերություն
- Արտադրություն
- Շինարարություն
- Դիզայն
- Դեկոր
- Տեքստիլ

Ընկերության համար առավել կարևոր գործունեության ոլորտներից կարելի է առանձնացնել շինարարությունում ներքին և արտաքին հարդարման համար օգտագործվող նյութերի և բետոնե իրերի արտադրությունը:

Թողարկողի արտադրանքի և ծառայությունների իրացման ծավալներ՝ ըստ հիմնական ուղղություններ 2013-2015թթ առաջին կիսամյակների համար ունի հետևյալ տեսքը՝

հազ.դրամ

	2015թ. առաջին կիսամյակ	2014թ.	2013թ.
Արտադրանքի վաճառքից հասույթ	981,293	2,379,400	2,194,790
Ապրանքների վաճառքից հասույթ	104,314	905,141	1,521,167
Շինարարական աշխատանքների կատարումից հասույթ	12,516	93,633	133,081
Ծառայությունների մատուցումից հասույթ	69,560	40,609	350,299
Հանքերի արտադրանքի վաճառքից հասույթ	270,248	344,957	201,869
	1,437,931	3,763, 740	4,401,206

Նշված ժամանակահատվածում արտադրանքների և ծառայությունների վաճառքի գների էական փոփոխություններ չեն եղել, իսկ կիսամյակային արդյունքներով ինքնարժեքը հասույթի նկատմամբ ավելացել է 7%-ով, որը պայմանավորված է 2014թ-ի դեկտեմբերին արտարժույթի փոխարժեքի աճով, չնայած նրան, որ որոշ հումքեր օգտագործվում է տեղականը:

Ընկերությունը որևէ խմբի անդամ չէ:

Ընկերության տրամադրության տակ եղած ակտիվների համարժեք են Ընկերության հիմնական գործունեությանը և բիզնեսին, քանի որ դրանց գերակշիռ մասը օգտագործվում է հիմնական գործունեության համար և ընդգրկված է արտադրական պրոցեսում ու ծառայությունների մատուցման ոլորտներում:

Ընկերության տրամադրության տակ եղած հիմնական միջոցների պիտանելիությունը կարելի համարել 70%՝ հաշվի առնելով մաշվածությունը, չնայած այն հանգամանքին վոր մաշվածության մեծ բաժինը պատկանում է Ընկերության շենքերին և շինություններին:

2. Թողարկողին առնչվող ռիսկեր:

Թողարկողի՝ արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման ունակության վրա կարող է ազդել միայն Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացումը, որը կարող է հետևանք լինել մի շարք գործոնների:

Չնայած Ընկերության առաջարկի բազմազանությանը, Ընկերության գործունեությունը հիմնականում առնչվում է շինարարության ոլորտին: Ֆինանսական ճգնաժամի հետևանքով Հայաստանի շինարարության շուկայում զգալի անկում նկատվեց, մասնավորապես՝ 2009 թվականին, երբ շինարարության ծավալը կազմեց 575.7 մլրդ դրամ նախորդ՝ 2008 թվականի 858.6 մլրդ դրամի համեմատ:

Թեև անկման տեմպը նվազել է, տենդենցը դեռևս շարունակվում է՝ 2012 թվականին շինարարության ծավալը կազմել է 479.4 մլրդ դրամ, 2013թ-ին 442.3, 2014թ-ին 433.2 և 2015թ-ի հունվարից-օգոստոս ամիսներին՝ 221.0 մլրդ դրամ (վերջինս ցածր է անցած տարվանից 0.8%-ով), այնպես որ նկատվում է անկման կանգնում: Բացի այդ հազեցվածությունը տվյալ ոլորտում նպաստում է մրցակցության աճին:

Շինարարության անկման պայմաններում 2015թ-ի 1-ին կիսամյակում նվազել է Ընկերության հասույթը, համեմատած նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի: Ընկերությունը ներկա պահին անցել է ակտիվ վաճառքի՝ մասնավորապես պրեսսելերների միջոցով խանութներ այցելելով և տեղում պատվեր վերցնելով: Բացի այդ Ընկերությունը սկսել է մասնակցել մրցույթների՝ ինչպես պետական այնպես էլ մասնավոր հատվածներում:

2014թ-ին արտաբժույթի փոխարժեքի բարձրացումը բերեց 1.0 մլրդ փոխարժեքային վնասի և հետագայում ներմուծվելիք հումքերը ևս թանկացան, բայց երկարաժամկետ առումով դա բերում է իր դրական հետևանքները, քանի որ Ընկերությունը չբարձրացնելով իր գները ներմուծողների նկատմամբ դարձավ ավելի մրցունակ:

<Շեն Հոլդինգ> ՓԲԸ-ն 2015 թվականի 1-ին կիսամյակում սկսեց իրականացնել 10.0 մլն ԱՄՆ դոլարի ներդրումային ծրագրերը, որից 6.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ներդրվեց Ընկերության կանոնադրական կապիտալ և էմիսիոն եկամուտ, իսկ մնացած 4.0 մլն ԱՄՆ դոլարը Ընկերությունը ստացավ երկարաժամկետ, ցածր տոկոսադրույթով վարկի տեսքով: Տվյալ գումարի մեծ մասը արդեն վճարվել է գիպտոնիտի արտադրության նոր հոսքագծի ձեռքբերման համար, իսկ պեղիտի հոսքագիծը, բեռնատարերը, կիսակցորդները, էքսկավատորը արդեն ձեռք են բերվել:

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտաբժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտաբժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերությունը հիմնականում ենթարկվում է Եվրոյի և ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությանը:

Ընկերությունը որոշակի կախվածություն ունի հումքի ներկրումից, քանի որ Ընկերության մատակարարումների զգալի մասը կազմում է ներմուծումը: Ուստի ցանկացած իրադարձություն, որը կրերի մատակարարների երկարաժամկետ խաթարման (օրինակ՝ Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող ճանապարհների հնարավոր խնդիրներ), կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության բնականոն գործունեության վրա:

Թողարկվող պարտատոմսերին առնչվող ռիսկեր:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված գործոնները թողարկողի կարծիքով ամենաեականներն են, սակայն ոչ բոլորն են, որը կարող է ազդել արժեթղթերի շուկայական գնի վրա:

Որպես պարտատոմսերի շուկայական ռիսկը գնահատելու գործոններ կարելի է առանձնացնել հետևյալները՝

- Պարտատոմսերի թողարկման ժամանակ դրանք չունեն առևտրի հայտնի և կազմակերպված շուկա: Ուստի մինչև պարտատոմսերի ցուցակումը ներդրողները կարող են հնարավորություն չունենալ վաճառել իրենց պարտատոմսերը իրենց համար ձեռնտու գնով կամ այնպիսի գնով, որը թույլ կտա նրանց ստանալ երկորդային շուկա ունեցող նմանատիպ գործիքների հետ համեմատելի եկամտաբերություն:
- Այնուամենայնիվ Ընկերությունը՝ իրացվելության հետ կապված ռիսկը մեղմելու համար, տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո դիմելու է ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ-ին պարտատոմսերը ցուցակելու համար: Ցուցակվելուց հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետում, արժեթղթերի շուկայի որևէ մասնագիտացված անձի հետ կկնքվի պայմանագիր, որով տվյալ անձը կհանդիսանա պարտատոմսերի շուկա ստեղծող:
- Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույթների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:
- Քանի որ պարտատոմսերում ներդրումները դոլարային են, ուստի դոլարի փոխարժեքի կտրուկ տատանումները, նույնպես կարող են ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելության ցուցանիշների վրա:

3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման միտումները հիմնականում պայմանավորված են Ընկերության արտադրանքի և ծառայությունների իրացման ծավալներով, որոնք 2013-2014թթ գրեթե նույնն են եղել, իսկ 2015 թվականի առաջին կիսամյակում զգալիորեն նվազել են, ինչը սակայն հիմնականում պայմանավորված է մի քանի պետական մրցույթների ապրանքների վաճառքի նվազմամբ և

Հայաստանում տնտեսական աճի տեմպի նվազմամբ, որն էլ բերում է Ընկերության իրացման ծավալների նվազման:
Ընկերության լիցենզիաները հետևյալներն են՝

Լիցենզիայի համար	Գործունեության տեսակ	Տրման ամսաթիվ	Գործողության ժամկետ	Լիցենզավորող մարմնի անվանում
ՇԱԹՎ-29/029 (նախկին ՀԱ-Լ-14/9)	Գիպսատար ապարի արդյունահանում	24.07.2003թ.	24.07.2003թ. - 24.07.2028թ.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
11375	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում	20.03.2007թ.	20.03.2007թ. - անժամկետ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
ՇԱԹՎ-29/030 (նախկին ՀԱ-Լ-14/637)	օրգանածին կրաքարերի արդյունահանում	07.10.2010թ.	07.10.2010թ. - 07.10.2035թ.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ՇԱԹՎ-29/166 (նախկին ՀԱ-Լ-14/670)	Ավազի արդյունահանում	25.07.2011թ.	25.07.2011թ. - 25.07.2036թ.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Ընդհանուր առմամբ կարելի է ասել որ չեն եղել և չեն էլ նախատեսվում այնպիսի այլ առանձին գործոններ, որոնք ունեցել կամ ունենալու են էական ազդեցություն ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա:

4. 2013 և 2014 թթ. Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Ֆինտեխ Աուդիտ» ՓԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ ք. Երևան 0019, Պոռշյան 2/1, իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3, հեռ. (+374 10) 229 238:

5. Թողարկողի կառավարման մարմնի անդամներն են՝

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառությունը (տարի)
Սամվել Բեգլարյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ	36, (այդ թվում՝ ընկերությունում 22)
Պապ Բադալյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր գործադիր տնօրեն	41, (այդ թվում՝ ընկերությունում 18)
Գագիկ Եղիազարյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի անկախ անդամ	24, (այդ թվում՝ ընկերությունում 3)
Թաթևու Մովսիսյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ	25, (այդ թվում՝ ընկերությունում 3)
Շանթ Անանյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի ոչ գործադիր անդամ	13, (այդ թվում՝ ընկերությունում 4)
Արմեն Բալասանյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի վերստուգող (ներքին աուդիտոր)	18, (այդ թվում՝ ընկերությունում 10)
Մյուզաննա Ենգիբարյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի տնօրինության անդամ (մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար)	12, (այդ թվում՝ ընկերությունում 3)
Սերգեյ Դուրախանյան	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի տնօրինության անդամ (ֆինանսական տնօրեն)	10, (այդ թվում՝ ընկերությունում 3)

Ընկերության աշխատակիցների ընդհանուր թիվը 416 է և առանձնացված պահակային ծառայություն: Ընկերության միակ խոշոր բաժնետերերը Սամվել Բեգլարյանն է, ով տիրապետում է Ընկերության բաժնետոմսերի 99.9 տոկոսին և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը, որը Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերն է:

6. Ըստ 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Ընկերության տնօրենների խորհրդի կողմից ընդունված պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշման՝ որոշվել է թողարկել է դոլարային պարտատոմսեր՝ տարեկան 11% եկամտաբերությամբ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 50,000 հատ



և դրամային պարտատոմսեր՝ տարեկան 17.5% եկամտաբերությամբ 10 000 ՀՀ դրամ անվանական արժեքով 25,000 հատ, անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 5 տարի շրջանառության ժամկետով և արժեկտրոնների կիսամյակային վճարմամբ:

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 5.000.000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար և 250 000 000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

Ընկերության կողմից պարտատոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ պլանավորում է ներգրավել գրեթե ամբողջ գուտ գումարը, որի մեծ մասը ուղղվելու է գոյություն ունեցող պարտքի վերաֆինանսավորմանը, կրեդիտորական պարտքերի մարմանը և հումքերի ձեռքբերման կանխավճարի տրամադրմանը:

7. Պարտատոմսերի տեղաբաշխումն (առաջարկի իրականացումը) սկսվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցումից հետո 5-րդ աշխատանքային օրը (թողարկման օր):

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից հետո երեսուներորդ աշխատանքային օրը: Տեղաբաշխման ընթացքում, մինչև երեսուներորդ աշխատանքային օրը բոլոր պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում, տեղաբաշխման ավարտը համարվում է վերջին պարտատոմսի իրացման օրը:

Անձը, որը նպատակ ունի ձեռք բերել Պարտատոմսեր, առձեռն Ընկերությանն է ներկայացնում Գնման Հայտ, որը պետք է բովանդակի՝

- իր անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու /լիազորված/ անձի ստորագրությունը).
- ձեռք բերվող պարտատոմսերի քանակը.
- նշում ձեռք բերվող պարտատոմսերի քանակի լրիվ կամ մասնակի բավարարման մասին.
- արժեթղթերի անձնական հաշվի համարը.
- հավաստիացում այն մասին, որ ազդագիրը նրան է տրամադրվել Գնման Հայտը ստորագրելու պահից առնվազն 24 ժամ առաջ:

Գնման Հայտին պետք է կցվի նաև պարտատոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Գնորդների կողմից գնման հայտերը ներկայացնելու պահից հետո 5 աշխատանքային ժամվա ընթացքում դրանք կարող են հետ կանչվել գնորդի կողմից համապատասխան գրությամբ: Հետ կանչված հայտերի համապատասխան գումարները գնորդները կարող են 2 աշխատանքային օրվա ընթացքում ստանալ Ընկերությունից՝ դիմումում նշված համապատասխան դոլարային և դրամային հաշվեհամարներին Ընկերության կողմից փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի դիմաց վճարումները ընդունվելու են միայն անկանխիկ ձևով: Գնորդը Ընկերության համար «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 1570003715240101 դոլարային և 1570003715240100 դրամային հաշվի համարներին միանվագ պետք է փոխանցի իր կողմից գնվող պարտատոմսերի համար անհրաժեշտ գումարը:

Գնորդի կողմից Գնման Հայտը ներկայացնելուց և համապատասխան գումարը Ընկերության բանկային հաշվին փոխանցելուց հետո, Ընկերությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարական է տալիս Հաշվի Օպերատորին համապատասխան քանակությամբ պարտատոմսերը Ընկերության հաշվից գնորդի հաշվին փոխանցելու համար:

Գնման Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

8. Պարտատոմսերի ազդագրին և կից ներկայացվող փաստաթղթերին ներդրողը կարող է ծանոթանալ «Շեն-Հոլդինգ» ՓԲԸ-ի ինտերնետային էջից՝ www.shenholding.com:

9. Թողարկողի՝ 2013, 2014 և 2015 թվականի առաջին կիսամյակի ամփոփ ֆինանսական տվյալներն ունեն հետևյալ տեսքը.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՍՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2015թ. առաջին կիսամյակ	2014թ. առաջին կիսամյակ	2014 թ.	2013 թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	1,437,931	1,817,225	3,763,740	4,401,206
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(1,011,738)	(1,150,218)	(2,340,768)	(2,675,806)
Համախառն շահույթ (վնաս)	426,193	667,007	1,422,972	1,725,400
Իրացման ծախսեր	(354,207)	(317,434)	(829,683)	(660,821)
Վարչական ծախսեր	(104,575)	(127,190)	(236,722)	(235,373)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	(32,589)	222,383	356,567	829,206
Գործառնական այլ եկամուտներ	14,159	31,430	904,503	83,351
Գործառնական այլ ծախսեր	(77,616)	(38,959)	(366,224)	(108,723)
Գործառնական շահույթ (վնաս)	(96,046)	214,854	894,846	803,834
Ֆինանսական ծախսեր	(415,689)	(379,408)	(825,146)	(474,452)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)				
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)				
Այլ ֆինանսական հոդվածներ	133,246	(37,440)	(1,017,419)	(75,025)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	(378,489)	(201,994)	(947,719)	254,357
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)				
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	(378,489)	(201,994)	(947,719)	254,357
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(25,325)	(23,422)	(50,821)	44,428
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	(403,814)	(225,416)	(998,540)	298,785

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2015թ. առաջին կիսամյակ	2014 թ.	2013 թ.
Հիմնական միջոցներ	13,448,648	13,645,154	12,030,322
Ոչ նյութական ակտիվներ	9,841	11,034	12,308
Ներդրումներ	13	13	1,355,181
Ներդրումային գույք	303,167	303,167	-
Փոխառություններ	1,650,131	1,711,280	107,888
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	-
Կանխավճար ՀՄ-ների համար	1,941,586	10,488	5,182
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	598,490	298,490	-

Գուղվիլ	414,670	414,670	414,670
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	18,366,546	16,394,296	13,925,551
Պաշարներ	1,889,526	1,845,945	2,045,012
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	459,986	454,503	1,138,326
Կանխավճ. պաշարների և ծառ-ների համար	118,628	644,965	
Փոխառություններ	63,789	-	153,518
Շահութահարկի գծով կանխավճար	1,517	-	-
Դտ. պարտքեր այլ հարկերի և պարտ. վճ. գծով	294,041	218,419	-
Դրամական միջոցներ	2,565,773	65,014	41,597
Այլ ընթացիկ ակտիվներ	194,500	91,394	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	5,587,760	3,320,240	3,378,453
Ընդամենը ակտիվներ	23,954,306	19,714,536	17,304,004
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Կանոնադրական կապիտալ	6,197,000	3,350,000	3,350,000
Էմիսիոն եկամուտ	-	-	433,833
Պահուստային կապիտալ	-	-	225,000
Կուտակված շահույթ	2,439,409	2,843,223	3,282,928
Սեփական կապիտալի այլ տարրեր	-	-	-
Ընդամենը սեփական կապիտալ	8,636,409	6,193,223	7,291,761
Վարկեր	7,597,634	5,964,048	3,684,660
Պարտատոմսեր	1,892,753	1,902,526	1,624,820
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-	-
Հետաձգված հարկային պարտավորություն	756,747	756,747	772,754
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	10,247,134	8,623,321	6,082,234
Վարկեր	623,436	908,796	2,119,682
Պարտատոմսեր	17,658	18,491	
Փոխառություններ	2,383,070	1,420,000	1,026
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	1,211,160	1,473,666	862,776
Ստացված կանխավճարներ	549,888	852,469	595,636
Շահութահարկի գծով պարտավորություն	-	18,788	17,548
Այլ հարկերի և պարտադիր վճ. գծով պարտավորություն	160,453	89,039	226,537
Աշխ.-ի և այլ կարճ.հատ. գծով պարտավորություն	125,098	116,743	106,804

Այլ պարտավորություններ	-	-	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	5,070,763	4,897,992	3,930,009
Ընդամենը սեփ. կապիտալ և պարտ-ներ	23,954,306	19,714,536	17,304,004

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2015թ. առաջին կիսամյակ	2014թ. առաջին կիսամյակ	2014թ.	2013 թ.
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	65,014	41,597	41,597	107,781
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(72,230)	261,133	1,164,208	542,981
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(2,303,979)	(476,582)	(2,603,687)	(1,347,446)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	4,876,968	368,475	1,462,896	738,281
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	2,565,773	194,623	65,014	41,597

ՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2015թ. առաջին կիսամյակ	2014 թ.	2013 թ.
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) (հազ. դրամ)	(0.652)*	(2.981)	0.892
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	(4.68%)*	(16.12%)	4.10%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	(1.69%)	(5.06%)	1.73%
Զուտ շահույթի մարժա (NMP)	(28.08%)	(26.53%)	6.79%
Կապիտալի համարժեքության գործակից	0.361	0.314	0.421
Ֆինանսական կախվածության գործակից	1.774	2.183	1.373
Բացարձակ իրացվելիության գործակից	0.519	0.013	0.050
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.691	0.282	0.339
Ընդհանուր իրացվելիության գործակից	1.102	0.678	0.860
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.126*	8.281	3.866
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	116.761	44.077	94.403
Պաշարների շրջանառելիության գործակից	0.535*	1.268	1.308
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	681.675	287.841	278.955
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	0.676*	1.378	2.205
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	539.961	264.809	165.553

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը: Մտորել նշված ռիսկային գործոնները կամ դրանց մի մասը կարող են բացասաբար անդրադառնալ պարտատոմսերի առավաճառքի գների վրա, և որպես արդյունք՝ հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված գործոնները ոչ բոլոր են, որը կարող է ազդել արժեթղթերի շուկայական գնի վրա: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկային գործոնները, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ գործոններ, որոնք Թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի գործոն կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Որպես պարտատոմսերի շուկայական ռիսկը գնահատելու գործոններ կարելի է առանձնացնել հետևյալները՝

- **Իրացվելիության ռիսկ:** Պարտատոմսերի թողարկման ժամանակ դրանք չունեն առևտրի հայտնի և կազմակերպված շուկա: Ուստի մինչև պարտատոմսերի ցուցակումը ներդրողները կարող են հնարավորություն չունենալ վաճառել իրենց պարտատոմսերը իրենց համար ձեռնտու գնով կամ այնպիսի գնով, որը թույլ կտա նրանց ստանալ երկրորդային շուկա ունեցող նմանատիպ գործիքների հետ համեմատելի եկամտաբերություն: Այնուամենայնիվ Ընկերությունը՝ իրացվելիության հետ կապված ռիսկը մեղմելու համար, տեղաբաշխման ավարտից անմիջապես հետո դիմելու է ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՄ Արմենիա ԲԲԸ-ին պարտատոմսերը ցուցակելու համար: Ցուցակվելուց հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետում, արժեթղթերի շուկայի որևէ մասնագիտացված անձի հետ կկնքվի պայմանագիր, որով սովյալ անձը կհանդիսանա պարտատոմսերի շուկա ստեղծող:
- **Տոկոսադրույքի ռիսկ:** Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա, մասնավորապես՝ տոկոսադրույքների աճը կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:
- **Արտարժույթային ռիսկ:** Եթե ներդրումները կատարվել են մեծամասամբ դոլարային պարտատոմսերում, ուստի դոլարի փոխարժեքի կտրուկ տատանումները, նույնպես կարող են ազդել պարտատոմսերի եկամտաբերության ցուցանիշների վրա:
- **Գնաճի ռիսկ:** Դրամային պարտատոմսերում ներդրումների դաքում բարձր գնաճի ցուցանիշները նույնպես կարող են բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության ցուցանիշների վրա: Այս դեպքում թե ներդրումները կատարվել են մեծամասամբ դոլարային

Ներդրողները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ պարզելու համար, թե արդյոք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավական տեսանկյունից թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար: Դեռ ավելին, ֆինանսավարկային կազմակերպությունները պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների կամ կարգավորող մարմինների հետ պարզելու համար պարտատոմսերով գործարքների համապատասխանությունը՝ ակտիվների ռիսկերի կշռման կամ կիրառելի նմանատիպ այլ կանոններին:

Հիմնական տեղեկատվություն

1. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը:

Ընկերության կողմից պարտատոմսերի թողարկմամբ և տեղաբաշխմամբ պլանավորվում է ներգարվել 5.000.000 ԱՄՆ դոլար, և 250.000.000 ՀՀ դրամ գուտ գումարը, որի մեծ մասը ուղղվելու է գոյություն ունեցող պարտքի վերաֆինանսավորմանը, կրեդիտորական պարտքերի մարմանը և հումքերի ձեռքբերման կանխավճարի տրամադրմանը:

Տեղեկատվություն կապված առաջարկվող արժեթղթերի հետ

ա. Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը անվանական, արժեկտրոնային պարտատոմսեր են:

բ. Ընկերությունը թողարկել է իր պարտատոմսերը համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

գ. Ընկերության թողարկված պարտատոմսերը, ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրի վարման համար 2015թ-ի դեկտեմբերի 11-ին կնքվել է համապատասխան պայմանագիր՝ հաշվի օպրատոր Կապիտալ Ինվեսթմենթս ՓԲԸ-ի հետ՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ծառայության մատուցման:

դ. Ընկերության թողարկված դոլարային պարտատոմսերի անվանական արժեքը 100 ԱՄՆ դոլար է, իսկ դրամային պարտատոմսերինը՝ 10 000 ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող դոլարային արժեթղթերի քանակը կազմում է 50.000 հատ՝ 5.000.000 (Հինգ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, իսկ դրամայինը՝ 25.000 հատ՝ 250.000.000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

ե. Պարտատոմսերը թողարկվել են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

զ. Համաձայն ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքի 70-րդ հոդվածի՝ իրավաբանական անձի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

- առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.
- երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
- երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.
- չորրորդ հերթին մարվում է բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.
- հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.
- վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Տեղաբաշխվող պարտատոմսերի գծով պարտատերերի պահանջները ենթակա են բավարարման հինգերորդ հերթին:

Պարտատոմսերի վերադասակարգում չի նախատեսվում:

է. Պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն տեղաբաշխման առաջին օրվանից (թողարկման օր) հաշված վեց ամիս պարբերականությամբ, թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ, 54-րդ և 60-րդ ամսվա համապատասխան օրերին ստանալ վճարվող արժեկտրոնային եկամուտը:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն պարտատոմսերի մարման օրը՝ թողարկման օրվան հաջորդող 60-րդ ամսվա համապատասխան օրը, Ընկերությունից ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը:

Նշված գումարները Ընկերությունը փոխանցելու է սեփականատերերի՝ որևէ բանկում բացված հաշվին Այն դեպքում երբ պարտատոմսերի սեփականատերերը չունեն կամ չեն ներկայացրել համապատասխան բանկային հաշիվ՝ Ընկերությունը նշված գումարները վճարման օրվանից 5 աշխատանքային օր հետո, ուղարկում է նոտարի դեպոզիտ հաշիվ:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Ընդ որում, պարտատոմսերը Ֆոնդային բորսայում ցուցակվելուց հետո պետք է շրջանառվեն միայն ֆոնդային բորսայում, համաձայն «Արժեթղթերի Շուկայի մասին» ՀՀ օրենքի 129-րդ հոդվածի և ՀՀ կենտրոնական բանկի 16.04.2008թ. թիվ 125-Ն որոշման:

Ընկերության կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,

Ընկերության կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով (սնանկ ճանաչվելու արդյունքում) դատական կարգով լուծարման դեպքում օգտվել պարտատիրոջը օրենքով վերապահված իրավունքներից,

Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

ը. Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը սկսում են հաշվարկվել տեղաբաշխման առաջին օրվանից (թողարկման օր) և վճարվում են կիսամյակային պարբերականությամբ՝ թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ, 54-րդ և 60-րդ ամսվա համապատասխան օրերին (արժեկտրոնների հաշվարկման օրեր): Արժեկտրոնների հաշվարկման և վճարման օրերը նույն են, բացառությամբ՝ եթե տվյալ օրը ոչ աշխատանքային է: Այդ դեպքում արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները վճարվում են ՀՀ դրամով՝

- դրամային պարտատոմսերի համար՝ 875 ՀՀ դրամ
- դոլարային պարտատոմսերի համար՝ 5.5 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից վճարման նախորդ օրը հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի փոխարժեքով)

Ընկերությունը արժեկտրոնների հաշվառման օրվան նախորդող օրվա ժամը 24.00-ի դրությամբ Հաշվի Օպերատորից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով, վճարում է համապատասխան գումարներ:

Պարտատոմսերի մայր գումարի վերադարձը կատարվում է պարտատոմսերի մարման օրը՝ քաղվածքի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձանահսկություններ սահմանված չեն:

թ. Պարտատոմսի մարման օրը տեղաբաշխման սկզբից հաշված 60-րդ ամսվա համապատասխան օրն է: Ընկերությունը մարման օրվանը նախորդող օրվա ժամը 24.00-ի դրությամբ Հաշվի Օպերատորից վերցնում է պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածք, որի հիման վրա պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով վճարում է համապատասխան գումարներ (պարտատոմսերի անվանական արժեքը):

Պարտատոմսերի մարման և մարման վաճարման օրը նույնն է: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսի անվանական արժեքի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Միաժամանակ Ընկերությունը հանձնարարական է տալիս Հաշվի Օպերատորին՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

ժ. Պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը թողարկողի կողմից սահմանվել է 11% դոլարային պարտատոմսերի համար և 17.5%՝ դրամային պարտատոմսերի համար՝ յուրաքանչյուր կիսամյակում համապատասխանաբար 5.5% և 8.75% անվանական արժեքի նկատմամբ: Գնորդները իրենց ստացած փաստացի եկամտաբերությունը հաշվարկելու համար պետք է ստացված գուտ գումարը (ստացված գումար-ներդրված գումար-ծախսեր) բաժանեն ներդած գումարի վրա և ստացված արդյունքը արտահայտեն ներդրման փաստացի օրերով:

ժա. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումը ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 07-ին Ընկերության տնօրենների խորհրդի կողմից:

ժբ. Պարտատոմսերի նկատմամբ որևէ սահմանափակում թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանված չէ:

Միակ սահմանափակումը համարվում է այն, որ պարտատոմսերը Ֆոնդային Բորսայում ցուցակվելուց հետո, պետք է շրջանառվեն միայն Ֆոնդային Բորսայում, համաձայն «Արժեթղթերի Շուկայի մասին» ՀՀ օրենքի 129-րդ հոդվածի և ՀՀ կենտրոնական բանկի 16.04.2008թ. քիվ 125-Ն որոշման: Բաժանորդագրությունների նվազագույն և առավելագույն մեծությունը սահմանված չէ:

ժգ. Ընկերության պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

1. Շահութահարկ
2. Եկամտային հարկ

Շահութահարկ: Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում վերջիններիս համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով: Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (գնման գնի և մարման ժամանակ ստացված անվանական արժեքի տարբերությունից) և
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելված):

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես, եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելված և այլն) ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով: Արժեկտրոնների վճարման պարագայում որպես հարկային գործակալ պետք է հանդես գա Ընկերությունը:

Եկամտային հարկ: Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք՝ այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Ընդ որում ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է: Պարտատոմսերից ստացված եկամուտները կապիտալի հավելվածից ենթակա չեն հարկման, իսկ անհատ տոկոսները (վճարված արժեկտրոնները) հաշվարկվում են համախառն եկամտում և հարկվում են 10

տոկոս դրույքաչափով: Ընդ որում, Ընկերությունը պարտատոմսերի արժեկտրոնների մարման ժամանակ ֆիզիկական անձանց համար կհանդիսանա հարկային գործակալ: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

Առաջարկի ժամկետները և պայմանները

1. Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար

ա. Ընկերության թողարկված դոլարային պարտատոմսերի յուրաքանչյուրի անվանական արժեքը 100 ԱՄՆ դոլար է, իսկ դրամայինը՝ 10 000 ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող դոլարային արժեթղթերի քանակը կազմում է 50.000 հատ՝ 5.000.000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, իսկ դրամայինը՝ 25.000 հատ՝ 250.000.000 (երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ:

բ. Պարտատոմսերի տեղաբաշխումն (առաջարկի իրականացումը) սկսվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցումից հետո 4-րդ աշխատանքային օրը (թողարկման օր):

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից հետո երեսուներորդ աշխատանքային օրը: Տեղաբաշխման ընթացքում, մինչև երեսուներորդ աշխատանքային օրը բոլոր պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում, տեղաբաշխման ավարտը համարվում է վերջին պարտատոմսի իրացման օրը:

Տեղաբաշխումը հետաձգելու կամ չեղյալ հայտարարելու համար թողարկողը որևէ հանգամանք չի նախատեսում, սակայն պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20 և 21 հոդվածներով սահմանված հիմքերի առկայությունը:

Ընկերությունը պարտավորվում է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր ինտերնետային էջում՝ www.shenholding.com:

1. **գ.** Անձը, որը նպատակ ունի ձեռք բերել Պարտատոմսեր, առձեռն Ընկերությանն է ներկայացնում Գնման Հայտ, որը պետք է բովանդակի՝

- իր անունը և ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու /լիազորված/ անձի ստորագրությունը).
- ձեռք բերվող պարտատոմսերի քանակը.
- նշում ձեռք բերվող պարտատոմսերի քանակի լրիվ կամ մասնակի բավարարման մասին.
- արժեթղթերի անձնական հաշվի համարը.
- հավաստիացում այն մասին, որ ազդագիրը նրան է տրամադրվել Գնման Հայտը ստորագրելու պահից առնվազն 24 ժամ առաջ:

Գնման Հայտին պետք է կցվի նաև պարտատոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Էլեկտրոնային տեղեկատվություն ստանալու համար Գնորդը հայտում պետք է նշի նաև էլեկտրոնային փոստի հասցե:

դ. Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցում չի նախատեսվում:

ե. Գնորդների կողմից գնման հայտերը ներկայացնելու պահից հետո 5 աշխատանքային ժամվա ընթացքում դրանք կարող են հետ կանչվել գնորդի կողմից համապատասխան գրությամբ: Հետ կանչված հայտերի համապատասխան գումարները գնորդները կարող են 2 աշխատանքային օրվա ընթացքում ստանալ Ընկերությունից՝ դիմումում նշված համապատասխան դոլարային և դրամային հաշվեհամարներին Ընկերության կողմից փոխանցելու միջոցով: Հետ կանչված հայտերի գումարների վերադարձման դեպքում բանկային փոխանցումների հետ կապված ծախսերը պետք է կատարի գնորդը, որը հետ է կանչել իր կողմից նախապես ներկայացված հայտը:

զ. Պարտատոմսերի ձեռք բերման հայտում որպես նվազագույն մեծություն կարող է նշվել 1 հատ պարտատոմս, իսկ որպես առավելագույն՝ թողարկման ողջ ծավալը՝ 50.000 հատ պարտատոմս՝ դոլարայինի դեպքում, իսկ դրամայինի դեպքում՝ 25.000 հատ:

է. Պարտատոմսերի դիմաց վճարումները ընդունվելու են միայն անկանխիկ ձևով: Գնորդը Ընկերության «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 1570003715240101 դոլարային և 1570003715240100 դրամային հաշվի համարներին միանվագ պետք է փոխանցի իր կողմից գնվող պարտատոմսերի համար անհրաժեշտ գումարը:

Գնորդի կողմից Գնման Հայտը ներկայացնելուց և համապատասխան գումարը Ընկերության բանկային հաշվին փոխանցելուց հետո, Ընկերությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնարարական է տալիս Հաշվի Օպերատորին համապատասխան քանակությամբ պարտատոմսերը Ընկերության հաշվից գնորդի հաշվին փոխանցելու համար:

Գնորդները 1 աշխատանքային օր հետո իրենց Հաշվի Օպերատորից կարող են պահանջել և ստանալ արժեթղթերի սեփականությունը հավաստող քաղվածք՝ համաձայն տվյալ Հաշվի Օպերատորի կանոնների:

ը. Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտը համարվում է տեղաբաշխման սկզբից հետո երեսուներորդ աշխատանքային օրը: Տեղաբաշխման ընթացքում, մինչև երեսուներորդ աշխատանքային օրը բոլոր պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում, տեղաբաշխման ավարտը համարվում է վերջին պարտատոմսի իրացման օրը: Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո Ընկերությունը հնարավորինս սեղմ ժամկետներում (բայց ոչ ավելի քան 2 աշխատանքային օրը) իր ինտերնետային կայքում (www.shenholding.com) հրապարակում է տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվություն:

թ. Սույն ազդագրով առաջարկվող պարտատոմսերի համար նախապատվության իրավունք նախատեսված չէ, իսկ Գնորդների կողմից Գնման Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականությամբ:

2. Տեղաբաշխման պլանը

ա. Սույն ազդագրով ներկայացվող առաջարկը ուղղված է ներդրողների բոլոր խմբերին (հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն):

բ. Գնորդների կողմից գնման հայտերը Ընկերությունը ներկայացնելուց հետո դրանք հաստատվում կամ մերժվում են: Հաստատված հայտերը գնորդի կողմից հետ չկանչվելու դեպքում դրանք համարվում են բավարարված (լրիվ կամ մասնակի՝ ըստ հայտում կատարված նշման), որոնց մասին Գնորդը կարող է տեղեկանալ ինչպես Ընկերության գրասենյակից, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ հայտը ներկայացնելուց 1 աշխատանքային օրվա ընթացքում: Էլեկտրոնային տեղեկատվություն ստանալու համար Գնորդը հայտում պետք է նշի նաև էլեկտրոնային փոստի հասցե:

3. Առաջարկի գինը

ա. Մեկ պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$P = \frac{A \times C}{2} \times \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{r}{200}\right)^{i-1+\tau}} + \frac{A}{\left(1 + \frac{r}{200}\right)^{N-1+\tau}}, \quad \tau = \frac{DSC}{E}$$

որտեղ.

P - Պարտատոմսի գինն է,

A - Պարտատոմսի անվանական արժեքն է,

C - Տարեկան վճարվող արժեկտրոնային տոկոսադրույքի բացարձակ արժեքն է

r - մինչև մարում տարեկան եկամտաբերությունն է,

- DSC - գործարքի կատարման պահից մինչև առաջիկա արժեկտրոնի վճարումը մնացած փաստացի օրերի թիվն է,
- E - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,
- N – տվյալ պահին մնացած արժեկտրոնի վճարումների քանակն է,
- i – արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոխվում է կախված տվյալ պահից մինչև վերջնական մարումը մնացած արժեկտրոնների վճարումների քանակից, և կարող է ընդունել 1-ից 10 արժեքները:

Սույն բանաձևով հաշվարկված գինը իր մեջ ներառում է նաև կուտակված արժեկտրոնները (ամբողջ գին), իսկ արժեկտրոնների կուտակումը յուրաքանչյուր կիսամյակի համար իրականացվում է հավասարաչափ:

Սույն ազդագրի գրանցումից հետո, բայց ոչ ուշ քան տեղաբաշխման առաջին օրը, Ընկերությունը իր ինտերնետային կայքում՝ www.shenholding.com, կհարապարակի տեղաբաշխման ողջ ընթացքի համար՝ յուրաքանչյուր օրվա մեկ պարտատոմսի գինը:

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում մեկ պարտատոմսի համար հնարավոր առավելագույն գինը դոլարայինի դեպքում՝ 101.5 ԱՄՆ դոլար է, իսկ դրամայինի դեպքում՝ 10,236.5 դրամ:

Պարտատոմսերի դիմաց վճարումները ներդրողները կատարում են դոլարայինի դեպքում՝ ԱՄՆ դոլարով, իսկ դրամայինի դեպքում՝ դրամով, անկանխիկ ձևով, Ընկերության բանկային հաշվին համապատասխան գումարը փոխանցելու միջոցով:

Ընդ որում՝ տեղաբաշխման ընթացքում մեկ պարտատոմսի համար փոխանցվող գումարը (հաշվարկված սահմանված բանաձևով) կլորացվում է՝ ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:

Գնորդները բուն տեղաբաշխման ծառայության հետ կապված որևէ ծախս չեն կատարում, սակայն արժեթղթերի կամ դրամային հաշվի բացման համար հնարավոր է որոշակի վճարներ, որոնք գնորդները պետք է կատարեն համապատասխան բանկում կամ Պահառուի մոտ, համաձայն վերջիններիս սակագնային քաղաքականության:

4. Տեղաբաշխումը

ա. Սույն ազդագրով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար երաշխավորված տեղաբաշխում նախատեսված չէ:

բ. Ընկերության պարտատոմսերի տեղաբաշխման համար որևէ անձի հետ պայմանագիր չի կնքվել, և տեղաբաշխումը կիրականացնի Ընկերությունը:

գ. Գնորդները ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց գումարները պետք է փոխանցեն Ընկերության համար «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 1570003715240101 դոլարային և 1570003715240100 դրամային հաշվի համարներին, իսկ բուն փոխանցումը կարող են կատարել բոլոր այն բանկերի միջոցով, որոնք իրենց կանոնների համաձայն մատուցում են տվյալ ծառայությունը:

Իրենց անունով արժեթղթերի հաշիվների բացման համար գնորդները կարող են դիմել ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած բոլոր այն անձանց, որոնք մատուցում են արժեթղթերի պահառության ծառայություն (ցանկը տես www.cba.am կամ www.nasdaqomx.am ինտերնետային կայքերում):

Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

ա. Սույն ազդագրով առաջարկվող արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը կդիմի «ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»ԲԲԸ-ին և կգործադրի բոլոր ջանքերը տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար, սակայն առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Տեղաբաշխված պարտատոմսերը չցուցակվելու դեպքում սույն թողարկումը կհամարվի չեղյալ, և Ընկերության տնօրենների խորհրդի կողմից համապատասխան որոշման կայացման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում պարտատոմսերի բոլոր գնորդները կստանան ներդրված գումարները՝ ներդրալ մինչ այդ օրը կուտակված տոկոսները:

բ. Մինչ այժմ Ընկերությունը թողարկել և տեղաբաշխել է 2760 մլն. ՀՀ դրամ և 4.0մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսեր, որոնք բոլորն էլ կարգավորվող շուկայում թույլատրվել են առևտրին: Ընկերության վերջին թողարկմամբ տեղաբաշխված 4.0 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով (ISIN՝ AMSHNCB21ER2) արժեկտրոնային պարտատոմսերը ներկայումս թույլատրված են ՆԱՄԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ-ում և ընդգրկված են Bbond ցուցակում: Սույն ազդագրով թողարկվելիք պարտատոմսերի համար Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհվել է ԱՄՏՕ-ի (ISIN) կողմ՝ դրամայինի դեպքում – AMSHNCB27ER9, դոլարայինի դեպքում – AMSHNCB22ER0:

գ. Առաջարկվող պարտատոմսերի երկրորդային շուկայում իրացվելիության ապահովման համար շուկա ստեղծող անձինք առայժմ չկան: Սակայն իրացվելիության ապահովման նպատակով, պարտատոմսերի ցուցակումից հետո Ընկերությունը հնարավորինս սեղմ ժամկետներում կկնքի համապատասխան պայմանագիր արժեթղթերի շուկայի որևէ մասնագիտացված անձի հետ (2013թ-ին թողարկված պարտատոմսերի համար համապատասխան պայմանագիր է կնքվել Ամերիաբանկ ՓԲԸ-ի հետ), որով սովյալ անձը կհանդիսանա պարտատոմսերի շուկա ստեղծող:

Լրացուցիչ տեղեկատվություն

- 1.** Պարտատոմսերի մասին տեղեկությունների մատուցում ներկայացված տեղեկությունների հետ կապված որևէ խորհրդատու ներգրավված չի եղել:
- 2.** Պարտատոմսերի մասին տեղեկությունների մատուցում ներկայացված տեղեկությունները Ընկերության արտաքին աուդիտի կողմից աուդիտի չի ենթարկվել:
- 3.** Պարտատոմսերի մասին տեղեկությունների մեջ երրորդ անձանց կողմից ստացված տեղեկատվություն չկա:
- 4.** Պարտատոմսերին շնորհված վարկանիշ չկա: Ընկերության ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2013 թվականի ապրիլին շնորհված վարկանիշը «Գ»-ն է:



ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորները

1. 2013 և 2014 թթ. Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Ֆինտելիս Աուդիտ» ՓԲԸ-ն. հասցեն՝ ՀՀ ք. Երևան 0019, Պոռոշյան 2/1, իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3, հեռ. (+374 10) 229 238:

2. Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին երկու տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

Ռիսկային Գործոններ

Թողարկողի՝ արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման ունակության վրա կարող է ազդել միայն Ընկերության ֆինանսական վիճակի վատթարացումը, որը կարող է հետևանք լինել մի շարք գործոնների:

Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ, որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Ընկերության ռիսկի վրա ազդող բացասական գործոններն են՝ շինարարության ոլորտում գործող մրցակցությունը, սահմանափակ շուկան, հաստատուն ծախսերի գերակայությունը, ապրանքանյութական պաշարների մեծ ծավալները:

Մրցակցության ռիսկ: Ընկերության գործունեության ոլորտում գոյություն ունեն մի քանի արտադրող ընկերություններ, բացի այդ, ընկերության մրցակիցներն են հանդիսանում նաև ներկրողները: Թեև վերջինիս պարագայում ապրանքի գնի վրա ազդում է փոխադրման և մաքսազերծման ծախսերը և արտարժույթային տատանումները, ներկրված ապրանքները նույնպես մրցակից են ընկերության արտադրանքի համար: Այսպիսով, ընկերության գործունեության ոլորտում շուկան հազեցած է:

Ընդհանուր ծախսերի մեջ հաստատուն ծախսերի գերակայությունը: Ընկերությունը զբաղվում է արտադրությամբ, ուստի ընկերության կապիտալ ծախսերը բավական մեծ են: Վերջինիս հետևանքով Ընկերությունը ներգրավել է մեծ քանակությամբ դրամական միջոցներ, որոնց սպասարկումը նույնպես մեծ գումար է կազմում: Այս հանգամանքը հատկանշական է տվյալ ճյուղում գործող արտադրող ընկերությունների համար, ինչը զգայուն է դարձնում Ընկերության շահույթը հասույթի փոքր տատանումների նկատմամբ:

Իրացվելիություն ռիսկ: Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է նաև իրացվելիության ռիսկին: Իրացվելիության ռիսկը նվազեցնելու համար, Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Մատչելիության իրավիճակի փոփոխության ռիսկ: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները կարող են իրենց անբարենպաստ ազդեցությունն ունենալ երկրում ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա, կարող են բերել ինչպես տնտեսական ակտիվության նվազման, այնպես էլ բնակչության եկամուտների նվազման, որն էլ իր հերթին բացասաբար կազդի թողարկողի իրացման ծավալների վրա:

Քաղաքական ռիսկ: Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ երկրում ընդհանուր տնտեսական իրավիճակի վրա,



կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ իր հերթին բացասաբար կազդի Թողարկողի իրացման ծավալների վրա:

Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ նշված գործոնների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար: Մասնավորապես՝ Ընկերությունը վերջին երկու տարիների ընթացքում շահագործել է կավի, գիպսի և ավազի հանքերը: Հանքերից արդյունահանված գրեթե ամբողջ հումքն հանդիսանում է որոշ վերջնական արտադրանքների արժեքի մոտ 40%: Այս փոփոխությունը թույլ է տվել Ընկերությանը նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը, ինչպես նաև արտարժույթային և այլ ռիսկերը կապված հումքի ներկրման հետ:

Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Ընկերության հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով և դրանով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Ընկերության կողմից:

Տեղեկատվություն թողարկողի մասին

Թողարկողի պատմություն և զարգացումը

ա. Ընկերության ֆիրմային լրիվ անվանումն է՝
 «Շեն Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերություն
 “Шен Холдинг” закрытое акционерное общество
 Closed Joint Stock Company <Shen Holding>

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝
 «Շեն Հոլդինգ» ՓԲԸ
 “Шен Холдинг” ЗАО
 CJSC <Shen Holding>

Ընկերության կազմակերպչարվական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն:

Ընկերությունը անվանափոխվել է և հանդիսանում է «Շեն-Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որն էլ հանդիսանում է «Շեն-Կոնցեռն» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդը՝ համաձայն 1999 թվականի դեկտեմբերի 16-ի հիմնադիր ժողովի արձանագրության:

«Շեն-Կոնցեռն» բաց բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է «Հայրեսուրսիմպեքս» բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որն անվանափոխվել է 1998 թվականի մայիսի 22-ին կայացած բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից՝ անվանափոխության մասին որոշման համաձայն (արձանագրություն N1): «Հայրեսուրսիմպեքս» բաց բաժնետիրական ընկերությունն իր հերթին հանդիսանում է ՀԽՍՀ Պետմատի 31.03.1970թ.-ի N80 հրամանի համաձայն ստեղծված «Հայգունմետվաճառ» ձեռնարկության իրավահաջորդը, որն անվանափոխվել է՝ համաձայն ՀՀ նյութական ռեսուրսների նախարարության 30.12.1993թ.-ի հրամանի, որպես «Հայրեսուրսիմպեքս» առևտրամիջնորդային ֆիրմա: Վերջինս, համաձայն ՀՀ կառավարության 06.07.1995թ.-ի N 575 որոշման սեփականաշնորհվել է և վերակազմավորվել որպես «Հայրեսուրսիմպեքս» բաց բաժնետիրական ընկերություն, հանդիսանալով «Հայրեսուրսիմպեքս» առևտրամիջնորդային ֆիրմայի իրավահաջորդը: «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն հանդիսանում է «ՀԱՆԹՄՄԱՆ ԲԻԼԴԻՆԳ ՓԲԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 12.02.1999թ.-ին, գրանցման վկայականի համար՝ 01 Ա 044431, գրանցման համար՝ 278.110.02637) իրավահաջորդը փոխանցման ակտին համապատասխան:

«Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն հանդիսանում է նաև «ՇԵՆ ԳԲՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 01.04.2010թ.-ին, գրանցման վկայականի համար՝ 03 Ա 087918, գրանցման համար՝ 269.120.03817) իրավահաջորդը փոխանցման ակտին համապատասխան:

«ՀԱՆԹՄՄԱՆ ԲԻԼԴԻՆԳ ՓԲԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների, «ՇԵՆ ԳԲՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության և Ընկերության բաժնետերերի



29.11.2012թ-ին կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն կատարվել է «ՀԱՆԹՍՄԱՆ ԲԻԼԴԻՆԳ ՓԲՈՒԱՔԹՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՇԵՆ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության միացումը Ընկերությանը:

բ. Ընկերությունը առաջին անգամ գրանցվել է 21.12.1995թ.-ին, վկայական N 01Ա021114, գրանցման համարը 269.130.01.032 որպես «Հայրենուրսիմպեքս» ԲԲԸ: Վերջին անգամ Ընկերությունը գրանցվել է 11.06.2013թ.-ին, վկայական N 03Ա084228, ներդիր N 005՝ «Շեն Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման և նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցման ժամանակ:
Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում:

գ. Ընկերությունը ստեղծվել է 1995թ.-ին և փաստացի գործունեություն է իրականացնում 1995 թվականից առ այսօր:

դ. Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում: Այն գտնվում է ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում, որտեղ էլ ծավալում է իր փաստացի գործունեությունը: Ընկերության կապի միջոցներն են՝ հեռ. (37410)-460-101, ֆաքս (37410)-460-101, էլ.փոստ՝ shen@shenholding.com, ինտերնետային կայքը՝ www.shenholding.com:

ե. Բացի 4-րդ և 5-րդ էջերում նշված դեպքերից վերջին շրջանում Ընկերության հետ տեղի ունեցած ամենաեական դեպքը, որը ներդրողները կարևորեն ընկերության իրացվելիության գնահատման համար կարելի է համարել այն, որ Ընկերությանը ՀՀ ԿԲ-ի կողմից շնորհված վարկանիշը 2013 թվականի ապրիլին «Գ»-ից իջեցվել է «Գ»-:

Ներդրումները

ա. Ընկերության պատմական ֆինանսական ժամանակաշրջանի էական ներդրումները հետևյալներ են՝

- ձեռք է բերվել Հանթաման Բիլդինգ ՍՊԸ-ն՝ 1.6 մլրդ ՀՀ դրամով (միացել է Ընկերությանը 2012թ-ի դեկտեմբերին), որն Երևանի Արցախի 49 հասցեում ունի 4.0 հա սեփական արտադրական տարածք՝ հագեցած արտադրական մասնաշենքերով և բետոնի արտադրման հուքագծով,

Ընկերություն մոտ ապագայում չի նախատեսում իրականացնել այնպիսի ներդրում, որը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 5 և ավելի տոկոսը:

Բիզնեսի նկարագիրը

Հիմնական գործունեությունը

ա. Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝

- Արտադրություն
- Հանքարդյունաբերություն
- Շինարարություն
- Դիզայն
- «Շեն Դեկոր» խանութ-սրահ
- «Շեն Տեքստիլ» խանութ-սրահ

1999թ.-ից ի վեր «Շեն Հոլդինգ»-ը զբաղվում է շինարարության և ներքին հարդարանքի համար կիրառվող մի շարք մատչելի, բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութերի արտադրությամբ: Ընկերությունն արտադրում է հակակոռոզիոն, ճակատային, լատեքսային, պատի, առաստաղի, հատակի ներկեր, նախաներկ, ալկիդային էմալ, ջրադիսպերսիոն և այլ ներկեր, ինչպես նաև ծեփամածիկներ, շինարարական չոր շաղախներ, սվաղ, սալիկի սոսինձներ, կապակցող նյութեր, բետոնե բլոկներ, մայթի սալիկներ և եզրաքարեր:

Ընկերությունը մշտապես իրականացնում է իր արտադրամասերի վերազինումն ու ընդլայնումը, համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին: Սեփական արտադրանքը կազմակերպելու, դրա կայուն որակը և հաստատուն ինքնարժեքը վերահսկելու համար Հոլդինգն իրականացնում է սեփական հումքի արդյունահանման աշխատանքներ գիպսատար ապարների, ավազի և օրգանածին կրաքարերի հանքավայրերում: Արդյունահանված հումքը կիրառվում է շինանյութերի արտադրության մեջ, ինչն առաջին հերթին նպաստում է շինանյութի՝ արտասահմանից ներկրման ծավալների կրճատմանը և դրանց մատչելիությանը:

2008թ.-ից «Շեն Հոլդինգ»-ը տվեց շինարարական աշխատանքներ իրականացնող ուղղության մեկնարկը և սկսեց զբաղվել ցածրահարկ և բարձրահարկ կառույցների ներքին հարդարման աշխատանքներով: Շնորհիվ սեփական արտադրամասի և, հետևաբար, արտադրվող նյութերի հետ աշխատանքի գերազանց տիրապետման՝ «Շեն Հոլդինգ» ՓԲԸ-ն շինարարական շուկայում առանձնանում է նորարարական նյութերի առավելագույն արդյունավետ կիրառմամբ շինարարական աշխատանքներում:

«Շեն Դիզայն» ճարտարապետական և դիզայնի ստուդիան առանձնանում է իր հեղինակավոր ճարտարապետների և դիզայներների աշխատակազմով:

Հոլդինգի այս ուղղությունը զբաղվում է ճարտարապետական և դիզայնի նախագծումով՝ տրամադրելով լանդշաֆտային, էքստերիեր և ինտերիեր դիզայնի ծառայություններ, որոնք ներառում են տարածքի չափագրումը, դիզայնի առաջարկի և գծագրային ողջ փաթեթի տրամադրումը, ինչպես նաև կատարվող աշխատանքների հեղինակային վերահսկումը:

«Շեն Դեկոր» խանութ-սրահում ներկայացված են պաստառների, դեկորատիվ ներկերի, սանտեխնիկայի և կերամիկական սալիկների իտալական, ֆրանսիական, գերմանական և իսպանական հանրահայտ բրենդների հավաքածուներ արտաքին և ներքին հարդարանքի համար: Ներկայացնելով եվրոպական առաջատար ընկերությունների արտադրանքները՝ «Շեն Դեկոր» խանութ-սրահն ապահովում է անթերի որակ և ընտրության լայն հնարավորություն:

«Շեն Տեքստիլ» մասնագիտացված խանութ-սրահում ներկայացված է միայն բացառիկ և բարձրակարգ գործվածքների, վարագույրների, քիվերի, գորգերի ու ինտերիերի ձևավորման համար անհրաժեշտ այլ պարագաների լայն ընտրանի: Ընկերությունը համագործակցում է իտալական, իսպանական, գերմանական, ֆրանսիական և եվրոպական այլ երկրների տեքստիլ և ինտերիերի արտադրող խոշորագույն ընկերությունների հետ:

բ. Որպես նոր արտադրատեսակ Ընկերությունը շուկային առաջարկում է սեփական հանքից արդյունահանվելիք կրաքարի փուլային վերամշակված 2 հիմնական արտադրատեսակներ, ինչպես նաև փքեցված պեռլիտ՝

1. Չհանգած կիր (հիմնական արտադրանք) - գյուղատնտեսության, պահածոների և շաքարի արտադրության համար և ոսկու, մետաղական այլ հանքավայրերի պոչամբարների քիմիական վնասակար նյութերի վնասագերծման համար: 2015թ-ի փետրվարից-հոկտեմբեր արդեն իսկ վաճառվել է 340.7մլն դրամի չհանգած կիր:
2. Հանգած կիր և փքեցված պեռլիտ (հիմնական արտադրանք) – հիմնականում Ընկերության կողմից արտադրվող գիպսոնիտի, ծեփամածիկների և սվաղի արտադրության համար մինչև 200 միկրոն ֆրակցիայի,

Հիմնական շուկաները

ա. Ընկերությունն իր արտադրանքն իրացնում է ինչպես տեղական շուկայում, այնպես էլ դրսում, մասնավորապես՝ Վրաստանում: Սակայն վրաստանյան շուկայում Ընկերության իրացման ծավալները դեռևս փոքր են և էական ազդեցություն չունեն Ընկերության գործունեության արդյունքների վրա:

Ընկերությունը իր արտադրանքն իրացնում է՝ հիմնականում հիմնվելով հետևյալ սկզբունքի վրա. որպես արտադրող Ընկերությունը նախընտրում է ավելի շատ գործ ունենալ խոշոր գնորդների հետ (խոշոր շինարարական կազմակերպություններ և շինարարական խանութներ), ինչն, ըստ էության, արդյունավետ մոտեցում է:

Ընկերության արտադրանքի հիմնական սպառողները շինարարական ընկերություններն ու անհատներն են: Անհատ սպառողները կազմում են բնակչության մոտ 25%-ը, որոնք ի վիճակի են ձեռնարկել որևէ

տեսակի շինարարական գործունեություն: Բնակչության այս մասը հիմնականում 35-ից 60 տարեկան անձինք են, որոնք նախընտրում են եվրոպական կամ ավանդական հայկական ոճը, իսկ ընտրություն կատարելիս որպես հիմնական գործոններ հաշվի են առնում որակը և գինը հավասարապես: Իր արտադրանքի մնացած մասը Ընկերությունը իրացնում է խոշոր շինարարական կազմակերպությունների և շինարարական խանութների միջոցով: Ընկերությունը չունի իր արտադրանքի այնպիսի սպառողներ, որոնց բաժին է ընկնում իրացումից ստացված տարեկան ընդհանուր հասույթի խոշոր մասը:

բ. Շեն Հոլդինգ» ՓԲ Ընկերությունը ՀՀ շինանյութերի արտադրության շուկայի առաջատարներից է և միակը, որ տրամադրում է ապրանքների և ծառայությունների համալիր ցանկ: Հոլդինգն իր գործունեությունն է ծավալում հանքարդյունահանման, շինանյութի արտադրության և ներմուծման, շինարարական և ներքին հարդարման աշխատանքների նախագծման և իրականացման ոլորտներում: Ընկերության բիզնես գործընթացները կառուցվում են համատեղ վստահության և թափանցիկության վրա՝ կարևորելով արդի տեխնոլոգիաների և որակի վերահսկման, կառավարման հստակ ընթացակարգերի կիրառումը: «Շեն Հոլդինգ»-ի կողմից արտադրվող ցանկացած ապրանքատեսակ և մատուցվող ցանկացած ծառայություն առավելագույնս համապատասխանում է արտադրական և բիզնես գործընթացների միջազգային ստանդարտներին:

Ընկերության գործունեության ոլորտում գոյություն ունեն մի քանի արտադրող ընկերություններ, այդ թվում Լիտոկոլ, Միքս և Քրաուն Քեմիքլս ընկերությունները: Բացի այդ, Ընկերության մրցակիցներն են հանդիսանում նաև ներկրողները: Շուկայում նրանց մասնաբաժնի և կիրառվող սպառման հիմնական մեթոդների մասին հավաստի տվյալները բացակայում են, սակայն նշենք, որ նրանց արտադրանքն առաջարկվում է համեմատաբար ցածր գնով (բացառությամբ Լիտոկոլի)՝ որակի առավել ցածր մակարդակի պայմաններում:

Սանիտարական կերամիկայի և սանտեխնիկայի ներմուծման ոլորտում հիմնական մրցակիցներ կարելի է դիտել «Իդեալ» և «Լոր տուն» խանութների ցանացերը, որոնք սակայն առաջարկում են սպառողների ավելի լայն զանգվածի համար նախատեսված ավելի մատչելի և լայն տեսականու արտադրանք:

«Կերամիկա» ՍՊԸ-ն աշխատում է սկսած 1997 թվականից և հանդիսանում է կարևոր մրցակիցներից կերամիկական սալիկների, սանտեխնիկայի և ինտերիեր դիզայնի շուկայում: Խանութ-սրահը համագործակցում է Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի խոշորագույն ընկերությունների հետ: «Կերամիկա» խանութ-սրահը առաջարկած տեսականին որակապես համադրելի է Ընկերության ներկայացրած տեսականու հետ, սակայն գների համեմատական տվյալներ այժմ բացակայում են:

Թողարկողի կառուցվածքը

Ընկերությունը որևէ խմբի անդամ չէ:

Թողարկողի հիմնական միջոցները

1. Ընկերության հիմնական միջոցներում էական համարվող հիմնական միջոցներ չկան, սակայն ստորև ներկայացվում է հիմնական միջոցներից էական մեծություն կազմողները՝

		<i>Հաշվեկշռա-յին աբժեք 30.09.15թ.</i>
1	Չոր շաղախների նոր արտի շենք և ենթակառուցվ.(Շիրակի 2/2)	472033
2	Գլխավոր պահեստի շենք (Արցախի 49)	315459
3	Գլխավոր պահեստի շենք (Շիրակի 2/2-1)	363233
4	Գիպսի արտադր-ի շենք և ենթակառուցվ.(Շիրակի 2/2)	332912
5	Կավիճի արտ-ի շենք (ք..Վեդի)	323766
6	Հողամաս 4.231 հա (Արցախի 49)	1083982
7	Հողամաս 3.477 հա (Շիրակի 2/2)	805170

8	Գիպսի հանք (Արմավիրի մարզ, գ. Մերձավան)	1717890
9	Կավիճի հանք (Արարատի մարզ, գ. Շաղափ)	324150
10	Բլոկների պատրաստման հոսքագիծ (Արցախի 49)	438563

Ընկերության վարձակալությամբ վերցրած և տրված հիմնական միջոցները հետևյալներն են՝

Ընկերությունը որպես վարձակալ ունի տեքստիլ խանութի տարածք, որը 2016թ-ի փետրվարի 1-ից ամբողջությամբ տեղափոխվելու է ավելի ցածր գնով մեկ այլ վարձակալվելիք տարածք:

Ընկերության տրամադրության տակ գտնվող որոշ հիմնական միջոցներ գրավադրված են՝ համաձայն կնքված վարկային պայմանագրերի: Գրավադրված հիմնական միջոցների ցանկը ներկայացված է ստորև՝

##	Գրավի առարկա	Պայմանագրի ամսաթիվ	Գրավատու	Հաշվեկշռա-յին արժեք 30.09.15թ.
1	Շենքեր և հողամաս (Երևան, Շիրակի 2/2 հասցեի 13,874.2քմ շենքեր, շինություններ և 3.4453հա հողամաս)	14.11.14թ.	Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան, Զարգացման և Վերակառուցման Եվրոպական Բանկ	823517
2	Շենքեր և հողամաս (Երևան, Շիրակի 2/24 հասցեի 1066 քմ խանութ 0.125252 հա հողամաս)	14.11.14թ.		355500
3	Շենքեր և հողամաս (Երևան, Շիրակի 2/25 հասցեի 163.6 քմ ինքնակամ շինություն և 0.016374 հա հողամաս)	14.11.14թ.		223516
4	Հոսքագիծ հանքի (Գիպսի մանրացման հոսք., տեղակ. Արմավիրի մարզ, գ. Մերձավան, Երևանյան խձ. 1 փող., թիվ 1/2, հասցեում)	09.12.14թ.		9889
5	Հոսքագիծ բետոնի (Արցախի 49)	09.12.14թ.		187136
6	Հոսքագիծ Erisim (Գիպսի մանրացնող և եփող սարքավորում, տեղակայված ^a Երևան, Շիրակի 2/2 հասցեում)	09.12.14թ.		114190
7	MAN 608 OR 61	09.12.14թ.		22980
8	MAN 609 OR 61	09.12.14թ.		20449
9	MAN 610 OR 61	09.12.14թ.		20406
10	MAN 611 OR 61	09.12.14թ.		22980
11	MAN 612 OR 61	09.12.14թ.		20406
12	CAT DL2L	09.12.14թ.		97941
13	CAT-ի շերեփ, կեռիկ, հիդրոմուրճ	09.12.14թ.		29553
14	Արաբկիր 43	12.12.14թ.	70615	
15	Շենքեր և հողամաս (Երևան, Շիրակի 2/5 հասցեի 1,544.8քմ շենքեր, շինություններ և 0.34 հա հողամաս)	31.01.13թ.	226054	
16	Շենքեր և հողամաս (Երևան, Արցախի 49 հասցեի 16,765.7քմ շենքեր, շինություններ և 4.231 հա հողամաս)	09.12.11թ.	1639695	
17	Հոսքագիծ (Poyatos բետոնե բլոկների արտադրության հոսքագիծ, տեղակայված Երևան, Արցախի 49)	09.12.11թ.	438563	
18	Հոսքագիծ (Poyatos բետոնե բլոկների արտադրության հոսքագիծ, տեղակայված Երևան, Շիրակի 2/4)	10.04.13թ.	263111	
19	Շենքեր և հողամաս (Երևան, Շիրակի 2/4 հասցեի)	02.12.13թ.	895520	
24	Վեղի հող 1.6 հա, հողի սեփականություն	11.12.14թ.		
26	Վեղի հող 2 հա, հողի սեփականություն	11.12.14թ.		
27	MAN 325 OP 61	12.06.15թ.	11183	
28	DAF 789 OV 61	12.06.15թ.	10273	

29	MAZ 887 LU 68	12.06.15թ.		287
30	GUYEN 810 L 01 Կիսակցորդ	12.06.15թ.		5460
31	GUYEN 811 L 01 Կիսակցորդ	12.06.15թ.		5451
32	Հոսքագիծ Չոր շաղախների Շիրակի 2/2	20.03.15թ.	Ամերիա	248773
33	Ներկերի արտադ-սի սարք-ը Շիրակի 2/2	20.03.15թ.		12765
34	Ն.Զարյան 74, բն.272	10.01.14թ.		232551
35	Հոսքագիծ Չոր շաղախների Շիրակի 2/4	25.12.13թ.		7095
36	JCB 456ZX 0021LS Vedi	03.09.13թ.	ՎՏԲ	53518
37	JCB 456ZX 0056LS Merdz.	03.09.13թ.	Բանկ	34282
38	CAT 330D, 0638LS	03.09.13թ.	Հայաստան	70433
39	CAT 320D, 1530LS	03.09.13թ.		53988
40	MAN TGA 18.430 053LP61	03.09.13թ.		12084
41	XONEXSAN EKS, Pricep 549L01	03.09.13թ.		12471
42	MAN TGA 18.430, 267LU67	03.09.13թ.		19066
43	GARSAN, Pricep 442L01	03.09.13թ.		6318
44	MAN TGA 33.360, 635LU68	03.09.13թ.		14809
45	MAN TGA 33.360, 636LU68	03.09.13թ.		14764
46	MAN TGA 33.360, 637LU68	03.09.13թ.		14780
47	Կավիճի վերամշակման հոսքագիծ Վեդի	03.09.13թ.		210598
48	Ավազի վերամշակման հոսքագիծ Վեդի	03.09.13թ.		17450
49	Արարատի մարզ, համայնք Վեդի, Շրջանցող 14, կրի արատդրամասի շինություն	16.03.15թ.	ՊանԱրմենիան	184164
50	Արարատի մարզ, համայնք Վեդի, Շրջանցող 14, կրի արատդրամասի սարքավորումներ	16.03.15թ.	ՊանԱրմենիան	285624

Ընկերությունն իրավունք ունի օգտագործել վերը նշված գրավի առարկաները դրանց նշանակությանը համապատասխան: Ընկերությունը իրավունք ունի գրավի առարկան հիմնական վերակառուցման ենթարկել, այլ անձի օգտին գրավ դնել, վարձակալության, անհատույց օգտագործման տալ, օտարել կամ որևէ այլ կերպ տնօրինել միայն գրավատուի նախնական գրավոր համաձայնությամբ:
Ընկերությունը ներկայումս չի պլանավորում ձեռք բերել Էական մեծություն կազմող հիմնական միջոցներ:

2.Միակ փոփոխությունը, որը կարող է սահմանափակել Ընկերության կողմից հիմնական միջոցների օգտագործումը, դա նշված վարկային պայմանագրերով պարտավարությունների չկատարումն է, ինչի հետևանքով գրավադրված գույքը սեփականության իրավունքով կանցնի գրավատուներին, որոնք կարող են սահմանափակել դրանց օգտագործումը:

Զարգացման վերջին միտումները

Թողարկողի արտադրանքի և ծառայությունների իրացման ծավալներ՝ ըստ հիմնական ուղղություններ 2013-2015թթ առաջին կիսամյակների համար ունի հետևյալ տեսքը՝

Հազ.դրամ

	2015թ. առաջին կիսամյակ	2014թ.	2013թ.
Արտադրանքի վաճառքից հասույթ	981,293	2,379,400	2,194,790
Ապրանքների վաճառքից հասույթ	104,314	905,141	1,521,167
Շինարարական աշխատանքների կատարումից հասույթ	12,516	93,633	133,081
Ծառայությունների մատուցումից հասույթ	69,560	40,609	350,299
Հանք. արտադ-քի վաճառքից հասույթ	270,248	344,957	201,869
	1,437,931	3,763,740	4,401,206

2015 թվականի առաջին կիսամյակում համեմատած 2014թ-ի 1-ին կիսամյակի հետ զգալիորեն նվազել է իրացումից հասույթը, ինչը պայմանավորված է Ռուսաստանից և այլ երկրներից տրանսֆերտների կրճատմամբ, Հայաստանում տնտեսական աճի նվազմամբ: Սակայն ինչպես արդեն 5-րդ էջում նշվեց՝

Ընկերության նոր քաղաքականության շնորհիվ վաճառքների ծավալները էականորեն կաճեն:

Իսկ առավել խոշոր իրացման ծավալները ապահովել են հետևյալ արտադրատեսակները՝

Հազ.դրամ

Հ/Հ	Արտադրատեսակ	Հասույթը 2014թ. առաջին կիսամյակ	Հասույթը 2015թ. առաջին կիսամյակ	Նվազում
1	Գիպսային շաղախ (գիպսոնիտ)	223,408	187,588	16.03% ↓
2	Սալիկի սուսինձ (ECO)	107,334	95,359	11.16% ↓
3	Գիպսային ծեփամածիկ (ABC)	156,080	120,997	22.48% ↓
4	Կավճային ծեփամածիկ	72,334	55,991	22.59% ↓
5	Լատեքսային ներկ (L)	57,381	48,525	15.43% ↓


Նշված ժամանակահատվածում արտադրանքների և ծառայությունների ինքնարժեքի ինչպես նաև վաճառքի գների փոփոխություններ գրեթե չեն եղել (փոփոխությունները փոքր են և հիմնականում կապված են արտարժույթի փոխարժեքի տատանումների հետ):

Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը

Ելնելով այն հանգամանքից, որ շինարարության ոլորտում դեռևս նկատվում է աճի (նվազման) տեմպերի խիստ տատանումներ Ընկերությունը ձեռնպահ է մնում սույն ազդագրում Շահույթի կանխատեսում կամ գնահատում ներկայացնելուց: Սակայն իրավիճակի կայունացման և շինարարության ոլորտի աշխուժացման դեպքում Ընկերությունը առնվազն իր ինտերնետային կայքում (www.shenholding.com) կհրապարակի իր գործունեության արդյունքում սպասվող շահույթի կանխատեսման և գնահատման մասին տեղեկատվություն:

Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

ա. Ընկերության կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը հետևյալն է՝



Ընկերության **բաժնետերերի ընդհանուր ժողովը** կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերության ժողովը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության, Ընկերության կանոնադրության, Ընկերության կորպորատիվ կառավարման կանոնագրքի և Ընկերության Բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգի՝ ընդունված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (արձանագրություն թիվ 2013-5, 23.09.2013թ.):

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

- 1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ (մասնակցող ձայների 3/4-ով).
- 2) Ընկերության վերակազմակերպումը (մասնակցող ձայների 3/4-ով).

- 3) Ընկերության լուծարումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից)։
- 4) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը (մասնակցող ձայների 3/4-ով)։
- 5) հայտարարված բաժնետոմսերի ծավալի, անվանական արժեքի, դասի և տեսակի սահմանումը (մասնակցող ձայների 3/4-ով)։
- 6) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը։
- 7) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը (մասնակցող ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից)։
- 8) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը։
- 9) ժողովի վարման կարգի հաստատումը։
- 10) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը։
- 11) ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը։
- 12) ընկերության աուդիտին իրականացնող անձի հաստատումը։
- 13) ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը։
- 14) ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով։
- 15) ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի, գլխավոր գործադիր տնօրենի, տնօրինության անդամների և վերստուգողի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը և նրանց գործունեության արդյունավետության գնահատումը։
- 16) ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների, հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը։
- 17) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը։
- 18) ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (մասնակցող ձայների 3/4-ով)։
- 19) բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը։
- 20) ընկերության խորհրդի, գործադիր մարմնի և վերստուգողի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը։
- 21) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը։

Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես նրա իրավասություն։

Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք սովոր (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ սույն կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ սահմանված չէ։

Ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ։

Բաժնետերերի պահանջով, ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է ներկայացվեն բաժնետերերին՝ նրանց պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով։

Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով)։

Ժողովին մասնակցելու իրավունք ունեն ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց պատվիրված նամակով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու կամ ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով: Ժողովի հրավիրման մասին ծանուցումը հրապարակվում է նաև Ընկերության ինտերնետային կայքում: Ժողովի գումարման մասին գրավոր ծանուցումը պետք է ուղարկվի կամ առձեռն հանձնվի ժողովի գումարման օրվանից առնվազն 10 (տաս) օր առաջ:

Ժողովին քննարկման դրված հարցերին վերաբերող նյութերը և տեղեկությունները, ժողովի գումարման օրվանից առնվազն 10 (տաս) օր առաջ պետք է հասանելի լինեն Ընկերության գրասենյակում:

Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, ընկերության աուդիտոս իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ՝ ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին խորհրդի որոշումը պետք է ընդունվի ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, ընկերության աուդիտոս իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

Ընդհանուր ժողովում ցանկացած բաժնետեր իրավունք ունի բացատրություններ պահանջել խորհրդի և գործադիր մարմնի ցանկացած անդամից օրակարգի ցանկացած հարցի վերաբերյալ՝ ժողովում իրազեկված որոշում կայացնելու նպատակով:

Ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ժողովի ընդունած որոշումները արձանագրվում են: Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Ընկերության **տնօրենների խորհուրդը (խորհուրդը)** ստանձնում է Ընկերության ձեռնարկատիրական գործունեության առաջնորդումը և ռազմավարական կառավարումը: Տնօրենների խորհուրդը պատասխանատու է գործադիր մարմնի և Ընկերության գործունեության վերահսկողության համար: Ընկերության տնօրենների խորհուրդը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության, Ընկերության կանոնադրության, Ընկերության կորպորատիվ կառավարման կանոնագրքի և Ընկերության Տնօրենների խորհրդի կանոնակարգի՝ ընդունված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (արձանագրություն թիվ 2013-5, 23.09.2013թ.):

Համաձայն Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության կանոնակարգի՝ Ընկերության տնօրենների խորհրդի իրավասություններն են՝

Ընկերության ռազմավարական կառավարումը

- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, Ընկերության ռազմավարության, տարեկան ծրագրի հաստատումը և դրանց նկատմամբ մշտադիտարկման սահմանումը,
- Իր գործունեության ու իր կողմից իրականացվող ընթացակարգերի արդյունավետության գնահատումը,
- Ընկերության կորպորատիվ քաղաքականությունների հաստատումը,
- Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

- Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- Ընկերության ներքին հսկողության համակարգի ձևավորումը և դրա արդյունավետության վերահսկումը,
- Ընկերության խորհրդին կից հանձնաժողովների ձևավորումը,
- Ռիսկերի կառավարման համակարգի ձևավորումը,
- Ընկերության իրավական համապատասխանության ապահովումը,
- Ընկերության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը և վճարման չափի սահմանումը,
- Վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
- Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը:

Ընկերության գույքի և կապիտալի կառավարումը

- Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում,
- Շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում,
- Բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարված գույքի շուկայական արժեքի որոշումը,
- Ընկերության կորպորատիվ կառուցվածքի ձևավորումը, այդ թվում՝
- Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնակարգերի ընդունումը,
- Դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը,
- այլ կազմակերպություններին մասնակցելը:

Կորպորատիվ գործողություններ

- Ընկերության վերակազմակերպման հարցի ներկայացումը ժողովի քննարկմանը,
- Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի նկատմամբ Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին հարցի ներկայացումը ժողովի քննարկմանը,
- Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով, ներկայացումը ժողովի քննարկմանը,
- բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացիայի), բաժանման հարցի ներկայացումը ժողովի քննարկմանը,
- Ընկերության կողմից պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
- Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
- Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամսյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
- Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը և նրա գործունեության նկատմամբ հսկողության սահմանումը

- Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը և դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- Ընկերության գործադիր մարմնի անընդհատության պլանավորումը,
- Ընկերության գործադիր մարմնի վարձատրության և փոխհատուցումների քաղաքականությանն ու ընթացակարգերի սահմանումը,
- Ընկերության գործադիր մարմնի գործունեության նկատմամբ մշտադիտարկման սահմանումը,
- Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման հարցերի հետ կապված որոշումների ընդունումը

- Ընկերության տարեկան հաշվետվությունների նախնական հաստատումը,
- տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի, այդ թվում՝
- ժողովների օրակարգի հաստատումը,
- ժողովների անցկացման ամսաթվի և գումարման ձևի հաստատումը,
- ժողովների անցկացման մասին բաժնետերերին ծանուցումը,
- ժողովների անցկացմանը նախապատրաստվելու ժամանակ բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկի սահմանումը,
- ժողովներում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը:

Տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ արտահերթ ժողովի կողմից: Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո: Խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետը չի կարող ավելի լինել, քան 4 (չորս) տարին:

Յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ:

Խորհրդի կազմում ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:

Խորհրդում ոչ գործադիր անդամները պետք է մեծամասնություն կազմեն: Խորհրդի ոչ գործադիր անդամներից առնվազն մեկը պետք է լինի անկախ: Խորհրդի անդամի անկախության չափանիշները սահմանվում են Ընկերության ներքին իրավական ակտերով:

Խորհրդի բոլոր անդամները իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ իրազեկվում են Ընկերության և իրենց պարտականությունների մասին:

Խորհրդի անդամները պետք է ունենան իրենց պաշտոնին համապատասխան որակավորում, հստակ ըմբռնեն իրենց դերը կորպորատիվ կառավարման համակարգում, ինչպես նաև ունակ լինեն ընդունել ողջամիտ որոշումներ Ընկերության գործունեության վերաբերյալ: Խորհրդի անդամի թեկնածուները պետք է բավարարեն Ընկերության ներքին իրավական ակտերով խորհրդի անդամի համար սահմանված չափանիշներին:

Ընկերության խորհրդի նախագահի և տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:

Ընկերության խորհրդին կից հանձնաժողովներ, այդ թվում՝ աուդիտի, չեն ձևավորվել:

Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության կազմակերպական, տեղեկատվական և փաստաթղթային ապահովումն իրականացնում է **Ընկերության կորպորատիվ քարտուղարը**, որը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության, Ընկերության կանոնադրության, Ընկերության կորպորատիվ կառավարման կանոնագրքի, Ընկերության Տնօրենների խորհրդի կանոնակարգի և Ընկերության Կորպորատիվ քարտուղարի կանոնակարգի՝ ընդունված Ընկերության տնօրենների խորհրդի կողմից (արձանագրություն թիվ 12, 09.09.2013թ.):

Ընկերության կորպորատիվ քարտուղարի գործառույթներն են՝

- Ընկերության կորպորատիվ կառավարման պրակտիկայի կատարելագործմանն աջակցում,
- Ընդհանուր ժողովի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և անցկացմանն աջակցում,
- Ընկերության տնօրենների խորհրդի նիստերի նախապատրաստում և անցկացմանն աջակցում,
- Կորպորատիվ տեղեկատվության պահպանում և բացահայտում գործում,

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են **Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ գլխավոր գործադիր տնօրենը և Ընկերության կոլեգիալ գործադիր մարմինը՝ տնօրինությունը՝** համաձայն ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ, կորպորատիվ կառավարման կանոնագրքով, Ընկերության Գործադիր մարմնի գործունեության կանոնակարգով (ընդունված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (արձանագրություն թիվ 2013-5, 23.09.2013թ.)) իրենց վերապահված իրավասությունների շրջանակում:

Ընկերության գործադիր մարմնի գործունեության հիմնական նպատակներն են՝

- Ընկերության արժեքի շարունակական աճի ապահովումը,

- Ընկերության տնտեսական կայունության, հասարակության սոցիալական բարեկեցության և բնապահպանական կայունության համակցումը,
- Ընկերության արտադրանքի և ծառայությունների բարձր որակական հատկանիշների պահպանումը և հաճախորդների բավարարվածության բարձր մակարդակի ապահովումը,
- Տեխնոլոգիական նոր լուծումների և նորամուծությունների կիրառումը,
- Ընկերության աշխատակիցների գիտելիքների և ունակությունների զարգացման, նրանց սոցիալական և տնտեսական բարեկեցության համար պայմանների ապահովումը,
- Ընկերության կորպորատիվ կառավարման պրակտիկայի շարունակական կատարելագործումը:

Ընկերության Տնօրինության գործառնություններն են՝

- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ներառյալ՝ ռազմավարության, տարեկան գործունեության ծրագրերի, գործարար առաջարկների ու նախագծերի մշակման աշխատանքների կոորդինացումը.
- Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի, ինչպես նաև Ընկերության գործարար ծրագրերի ծախսերի նախահաշիվների մշակման աշխատանքների կոորդինացումը.
- Ընկերության տարեկան, եռամսյակային ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների մշակման աշխատանքների կոորդինացումը.
- Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների գործունեության եռամսյակային, տարեկան ծրագրերի և դրանց ծախսերի նախահաշիվների ու կատարողականների հաստատումը.
- Տնօրենների խորհրդի կողմից հաստատման ենթակա ներքին իրավական ակտերի, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, հիմնարկների և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների/կանոնակարգերի նախագծերի, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի մշակման աշխատանքների կոորդինացումը.
- Ընկերության ընթացիկ գործունեությունը կանոնակարգող կարգերի, հրահանգների, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և այլ աշխատանքային փաստաթղթերի հաստատումը, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք համաձայն ՀՀ օրենսդրության, Ընկերության Կանոնադրության և ներքին իրավական ակտերի՝ ենթակա են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի հաստատմանը.
- Ընկերության գործունեության ռիսկերի կառավարման մեթոդաբանության մշակումը և դրա իրականացման նկատմամբ հսկողության սահմանումը.
- Ընկերության կորպորատիվ քաղաքականությունների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- Ընկերության վերակազմակերպման և այլ կորպորատիվ գործողությունների, ինչպես նաև Ընկերության կորպորատիվ կառուցվածքի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.
- Բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը.
- աշխատակիցների գնահատման և խրախուսման համակարգերի մշակումը և ներդրումը.
- Ընկերության աշխատակիցների սերնդափոխության պլանավորումը և դրա ապահովումը.
- Ընկերության կորպորատիվ մշակույթի զարգացումներին և կորպորատիվ արժեքների կառավարման, պահպանման ու փոխանցման գործընթացներին հետևելը,
- Բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի որոշումների կատարման ապահովումը.
- Ընկերության իրավական համապատասխանության ապահովումը,
- Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
- ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության Կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ հարցերի լուծումը:

Գլխավոր գործադիր տնօրենի գործառույթներն են՝

- Ընկերության տնօրինության գործունեության ղեկավարումը.
- Ընկերության տնօրինության տարեկան աշխատանքային պլանների ձևավորումը և դրա իրագործման ապահովումը.
- տնօրենների խորհրդի և տնօրինության անդամների միջև արդյունավետ հաղորդակցության ապահովումը.
- Ընկերության տնօրենների խորհրդում տնօրինության առաջարկությունների ներկայացումը.
- Ընկերության տնօրենների խորհրդին գործադիր մարմնի հաշվետվությունների տրամադրումը և դրանց ներկայացումը.
- տնօրինության նիստերում խնդիրների համակողմանի քննարկումների և հավասարակշռված որոշումների կայացման ապահովումը.
- տնօրինությունում ծագած տարաձայնությունների ու վեճերի լուծումը, տնօրինությունում փոխադարձ հարգանքի ու պատասխանատվության մթնոլորտի ձևավորմանը նպաստումը.
- Ընկերության աշխատակիցների գնահատման գործընթացի կոորդինացումը.
- Ընկերությանը հաճախորդների, գործընկերների, ՋԼՄ-երի, պետական մարմինների, հասարակական կառույցների հետ փոխհարաբերություններում ներկայացնելը.
- Ընկերության կողմից բացահայտվող տեղեկատվության մշակման և հրապարակման գործընթացի վերահսկումը.
- Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին՝ Ընկերության գործարար պրակտիկայի համապատասխանության մշտադիտարկումը և անհրաժեշտության դեպքում դրանցում փոփոխությունների և լրացումների կատարման ապահովումը.
- տնօրինության ընթացիկ և արտահերթ նիստերի հրավիրումը, մասնավորապես, տնօրինության անդամների՝ Կանոնակարգով նախատեսված կարգով ծանուցման ապահովումը, օրակարգի և նիստի անցկացման ձևի որոշումը.
- տնօրինության նիստերի նախագահումը
- Ընկերության պաշտոնական գրագրություններին հետևելը, նամակների և այլ փաստաթղթերի ստորագրումը.
- ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով գործադիր մարմնի ղեկավարի համար՝ նախատեսված գործառույթների իրականացումը:

Ընկերության տնօրինության որոշումներն ընդունվում են տնօրինության նիստերում: Ընկերության տնօրինության նիստերը հրավիրվում են առնվազն շաբաթը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:

Տնօրինության արտահերթ նիստերը գումարվում են գլխավոր գործադիր տնօրենի կողմից սեփական նախաձեռնությամբ, տնօրինության անդամի (ների), տնօրենների խորհրդի, վերստուգողի, Ընկերության արտաքին աուդիտի իրականացնող անձի պահանջով:

Տնօրինության նիստը իրավասու է, եթե նրանում ներկա է տնօրինության անդամների կեսը:

Տնօրինության որոշումներն ընդունվում են տնօրինության անդամների պարզ մեծամասնությամբ:

Չայների հավասարաչափ բաշխման դեպքում գլխավոր գործադիր տնօրենն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Տնօրինության անդամը, ով համաձայն չէ ընդունված որոշման հետ, իրավունք ունի գրավոր արտահայտել հատուկ կարծիք, որը նրան ազատում է որոշման համար պատասխանատվությունից:

Քվեարկության ժամանակ տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Չայների փոխանցումը տնօրինության մեկ անդամից մյուսին արգելվում է:

Տնօրինությունը իրավունք ունի նիստին մասնակցելու համար հրավիրել երրորդ անձանց, որոնց ցանկը սահմանվում է տնօրինության որոշմամբ:

Տնօրինության նիստերն արձանագրվում են: Արձանագրությունները կազմվում են նիստի ավարտից 5-օրյա ժամկետում:

Ընկերության գլխավոր գործադիր տնօրենը և տնօրինությունը հաշվետու են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին և տնօրենների խորհրդին:

Տնօրինությունը պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ՝ տվյալ եռամսյակին հաջորդող 45 օրվա ընթացքում, խորհրդի սահմանած կարգով՝ խորհրդին է ներկայացնում Ընկերության գործունեության վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվան հաջորդող չորս ամսվա ընթացքում Ընկերության տնօրինությունը խորհրդի սահմանած կարգով՝ խորհրդին է ներկայացնում Ընկերության տարեկան հաշվետվությունը, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է **վերստուգողը (ներքին աուդիտորը)**, համաձայն ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ, կորպորատիվ կառավարման կանոնագրքով, Ընկերության Վերստուգողի (ներքին աուդիտորի) գործունեության կանոնակարգով (ընդունված Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (արձանագրություն թիվ 2013-5, 23.09.2013թ.)) իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Վերստուգողի առաքելությունն է համակարգված և հետևողական ստուգումների միջոցով ապահովել անկախ և օբյեկտիվ կարծիք Ընկերության գործունեության, ռիսկերի կառավարման, ներքին հսկողության համակարգերի և Ընկերության կորպորատիվ կառավարման պրակտիկայի վերաբերյալ:

Վերստուգողը Ընկերության մշտական գործող մարմին է, որը ընտրվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և հաշվետու է վերջինիս և Ընկերության տնօրենների խորհրդին:

Վերստուգողը պետք է ունենա իր պաշտոնին համապատասխան որակավորում, հստակ ըմբռնի իր դերը Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգում:

Ընկերության վերստուգողը՝

- ստուգում և գնահատում է Ընկերության ներքին հսկողության համակարգը հետևյալ ուղղություններով.
 - Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետություն և արդյունավորություն.
 - Ակտիվների պաշտպանվածություն.
 - Հաշվետվությունների (ներքին և արտաքին) արժանահավատություն.
 - Իրավական համապատասխանություն.
- ստուգում և գնահատում է Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը և համարժեքությունը Ընկերության ռազմավարական նպատակներին.
- ստուգում և գնահատում է Ընկերության տեղեկատվական համակարգերի անվտանգությունն ու արդյունավետությունը.
- ներկայացնում է առաջարկություններ բացահայտված և/կամ հնարավոր անհամապատասխանությունների վերացման համար անհրաժեշտ ուղղիչ և/կամ կանխարգելիչ գործողությունների վերաբերյալ.
- մասնակցում է Ընկերության վարքագծային կանոնների խախտումների ուսումնասիրությանը.
- ստուգում է Ընկերության գործառնական գործունեությունը, գնահատում է բիզնես-գործընթացների արդյունավետությունը, ինչպես նաև Ընկերության գործունեության ոչ ֆինանսական ասպեկտները.
- խորհրդատվություն է մատուցում Ընկերության գործադիր մարմնին ներքին հսկողության, ռիսկերի կառավարման համակարգի և կորպորատիվ կառավարման պրակտիկայի բարելավման ուղղությամբ:
- համագործակցում է Ընկերության արտաքին աուդիտին իրականացնող կազմակերպության հետ.
- վեր է լուծում Ընկերության տարեկան և միջանկյալ հաշվետվությունները և բացահայտում է դրանց կազմման էական խնդիրները, տարեկան հաշվետվության վերաբերյալ տալիս է եզրակացություն.
- ուսումնասիրում է այնպիսի հարցեր, որոնք կապված են բյուջետավորման, մարդկային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև գործադիր մարմնի կողմից արտաքին աուդիտորների առաջարկների իրագործման հետ.
- կարող է հանդես գալ որպես Ընկերության բիզնես-խորհրդատու.
- ուսումնասիրում է Ընկերության կողմից նոր ակտիվների ձեռքբերման և գոյություն ունեցողների օտարման, ինչպես նաև Ընկերության պլանավորվող վերակազմակերպումների հետ կապված ռիսկերը, խնդիրները և ներկայացնում է առաջարկներ դրանց լուծման ուղղությամբ.
- գնահատում է Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի, տեղեկատվության շրջանառության, Ընկերության կառուցվածքի և տնտեսական գործունեության արդյունավետությունը.
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին, խորհրդին և գործադիր մարմնին հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված կարգով ու ժամկետներում,
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին և խորհրդին կանոնավոր հիմունքներով այժմեական տեղեկատվություն է տրամադրում Ընկերության ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման և հսկողության համակարգերում բացահայտված էական թերությունների մասին, ինչպես նաև ներկայացնում առաջարկություններ գոյություն ունեցող համակարգերի բարելավման ուղղությամբ.
- Ընկերության խորհրդին տեղեկացնում է այն էական սահմանափակումների մասին, որոնք խոչընդոտում են կամ կարող են խոչընդոտել իր առջև դրված խնդիրների իրականացումը:

Վերստուգողն ամեն տարի՝ ոչ ուշ, քան ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը սկսում է հաջորդ տարվա իր աշխատանքային պլանի մշակումը: Մինչև տարեկան աշխատանքային պլանի մշակումը վերստուգողը քարտեզագրում է ներքին աուդիտի (ստուգման) ենթակա ոլորտները: Ներքին աուդիտի ոլորտների քարտեզագրումից հետո վերստուգողը պարտավոր է գնահատել յուրաքանչյուր ոլորտի կարևորությունը և որոշել տարեկան աշխատանքային պլանում ընդգրկվող ոլորտները:

Վերստուգողի տարեկան աշխատանքային պլանը ընդգրկում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- Ընկերության կորպորատիվ կառավարման քաղաքականությունները, կառուցակարգերն ու ընթացակարգերը.
- Ընկերության ներքին հսկողության համակարգի, այդ թվում՝ ռիսկերի կառավարման և իրավական համապատասխանության ապահովման կառուցակարգերն ու ընթացակարգերը,
- Ընկերության կորպորատիվ վարքագծային կանոնների իրագործումը.
- Ընկերության կառավարման մարմինների, ինչպես նաև արտաքին աուդիտորի և այլ խորհրդատուների միջև տեղեկատվական հոսքերի կառավարումը.
- Ընկերության շահառուների իրավունքների պաշտպանվածությունը.
- Ընկերության բիզնես-գործընթացների կառավարումը, ներառյալ բիզնես-գործընթացների ընթացակարգերն ու սխեմաները.
- Ընկերությունում ֆունկցիոնալ պարտականությունների, իրավասությունների, պատասխանատվության նկարագրությունների կատարումը:

Տարեկան աշխատանքային պլանը մշակելիս վերստուգողը հաշվարկում է այն ռեսուրսներն ու ժամանակը, որոնք անհրաժեշտ են պլանն իրագործելու համար, և համապատասխանաբար, կազմում է տարեկան աշխատանքային պլանի բյուջե և ժամանակացույց:

բ. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Անուն, Ազգանուն	Բնակության վայրը (հասցեն)	Զբաղեցրած պաշտոնը	Իրավասությունները և պարտականությունները
Սամվել Բեգլարյան	ՀՀ, Երևան, Բաջազունու 52, բն. 12	«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահ	Որպես Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ՝ առաջնորդում է տնօրենների խորհրդի գործունեությունը, նախաձեռնում է տնօրենների խորհրդի գործունեության ընթացակարգերի, աշխատանքային տարեկան պլանների ձևավորումը և վերահսկում է դրանց իրագործումը, աջակցում է տնօրենների խորհրդի ոչ գործադիր/անկախ անդամների գործունեությանը, ապահովում է տնօրենների խորհրդի և գործադիր մարմնի իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատումը և դրանց փոխհարաբերությունների պրոֆեսիոնալ և կառուցողական բնույթի պահպանումը, հրավիրում է տնօրենների խորհրդի ընթացիկ և արտահերթ նիստեր, որոշում է օրակարգը և նիստի անցկացման ձևը, Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով վերահսկում է Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ժողովների նախապատրաստման գործընթացը, իրականացնում է այլ գործառնություններ, որոնք բխում են ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով տնօրենների խորհրդի՝ նախատեսված լիազորություններից:
Պապ Բաղայան	ՀՀ, ք. Երևան, Նազարբեկյան թաղ., 17 2, բն. 12	«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր գործադիր տնօրեն	Որպես տնօրենների խորհրդի անդամ՝ գործում է իր իրավասությունների շրջանակում, կատարում է բաժնետերերի ընդհանուր ժողովի և տնօրենների խորհրդի որոշումները: Որպես գլխավոր գործադիր տնօրեն՝ իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության կանոնադրությամբ, կորպորատիվ կառավարման կանոնագրքով, Կանոնակարգով և ներքին իրավական այլ ակտերով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

<p>Գազիկ Եղիազարյան</p>	<p>ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 27Ա/39</p>	<p>«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի անկախ անդամ</p>	<p>Որպես Հնկերության տնօրենների խորհրդի անկախ անդամ՝ նպաստում է Հնկերության զարգացմանը, հեղինակության և բաժնետիրական կապիտալի ավելացմանը, աջակցում է Հնկերությանը նպատակների, խնդիրների և ռազմավարության մշակման գործում, իր ուշադրությունը կենտրոնացնում է Հնկերության ու նրա բաժնետերերի շահերի պաշտպանության, ընդհանուր ժողովների նախապատրաստման ու անցկացման ընթացակարգերի, խորհրդի նիստերի նախապատրաստման ու անցկացման ընթացակարգերի, խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման, կորպորատիվ մշակույթի և սոցիալական պատասխանատվությանն առնչվող հարցերի վրա:</p>
<p>Թաթուլ Սովսիայան</p>	<p>ՀՀ, ք. Մարտունի, գ. Վարդենիկ, 4 փ., տուն 134</p>	<p>«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի անդամ</p>	<p>Որպես Հնկերության տնօրենների խորհրդի անդամ աջակցում է Հնկերությանը՝ գործունեության հիմնական ուղղությունների որոշման, Հնկերության ռազմավարության սահմանման, Հնկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանման, Հնկերության ներքին հսկողության համակարգի ձևավորման և դրա արդյունավետության գնահատման, Ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, Հնկերության աուդիտն իրականացնող անձի ընտրության և Հնկերության կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման նպատակ հետապնդող այլ հարցերում:</p>
<p>Շանթ Անանյան</p>	<p>ՀՀ, ք. Երևան, Ավանեսովի նրբ. 42, բն.18</p>	<p>«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդի ոչ գործադիր անդամ</p>	<p>Որպես Հնկերության տնօրենների խորհրդի անդամ աջակցում է Հնկերությանը՝ Հնկերության կորպորատիվ կառուցվածքի ձևավորմանը, Կորպորատիվ գործողությունների նախագծման և իրականացման, Գործադիր մարմնի սերնդափոխության, Հնկերության կորպորատիվ քաղաքականությունների, ռազմավարության, տարեկան ծրագրերի մշակման, Հնկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի մշակման և Հնկերության կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման նպատակ հետապնդող այլ հարցերում:</p>
<p>Արմեն Բալասանյան</p>	<p>ՀՀ, ք. Երևան, Բազրատունյաց 18 բն. 49</p>	<p>«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի վերստուգող (ներքին աուդիտոր)</p>	<p>Որպես վերստուգող՝ ստուգում և գնահատում է Հնկերության ներքին հսկողության համակարգը, ստուգում և գնահատում է Հնկերության ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը և համարժեքությունը Հնկերության ռազմավարական նպատակներին, ստուգում և գնահատում է Հնկերության տեղեկատվական համակարգերի անվտանգությունն ու արդյունավետությունը, ստուգում է Հնկերության գործառնական գործունեությունը, գնահատում է բիզնես-գործընթացների արդյունավետությունը, ինչպես նաև Հնկերության գործունեության ոչ ֆինանսական ասպեկտները:</p>
<p>Սյուզաննա Ենգիբարյան</p>	<p>ՀՀ, ք. Երևան, Աճառյան 18/45</p>	<p>«ՇԵՆ ՀՈՒՂԻՆԳ» ՓԲԸ-ի տնօրինության անդամ (մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար)</p>	<p>Որպես տնօրինության անդամ և մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար՝ մշակում և իրականացնում է Հնկերության կադրային քաղաքականությունը, ապահովում է ընկերության կազմակերպական կառուցվածքը, վերահսկում է աշխատանքային օրենսդրության նորմերի պահպանումը, Հնկերությանն ապահովում է համապատասխան կադրերով, պլանավորում և վերահսկում է աշխատակիցների վերապատրաստման գործընթացը, պլանավորում և վերահսկում է ընկերության</p>

			աշխատակիցների գնահատման գործընթացը:
Սերգեյ Դուրախանյան	ՀՀ, ք. Մասիս 2-րդ փող. տ.21	«ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի տնօրինության անդամ (ֆինանսական տնօրեն)	Որպես տնօրինության անդամ և ֆինանսական տնօրեն՝ մշակում է Ընկերության ֆինանսական ռազմավարությունը, կազմակերպում է սեփական միջոցների ձևավորման և փոխառու միջոցների ներգրավման աշխատանքները, մասնակցում է Ընկերության ներդրումային քաղաքականության մշակմանը, համագործակցում է ֆինանսավարկային կազմակերպությունների հետ, վերահսկում է Ընկերության հաշվետվությունների կազմման և ձևակերպման ճշգրտությունը, ապահովում է ֆինանսական տեղեկատվության արժանահավատությունը, որոշում է հնարավոր ֆինանսական ռիսկերը՝ ֆինանսական յուրաքանչյուր աղբյուրի նկատմամբ, ապահովում է կապիտալ ներդրումների և փոխհատուցելիության հաշվարկների կազմման, ձևակերպման և նախահաշիվների կազմման ճշտությունը, վերահսկում է ֆինանսական պլանի և բյուջեի կատարումը, հետևում է Ընկերությունում իրականացվող գույքագրման գործընթացին:

Ընկերության տնօրենների խորհրդի անկախ անդամ Գագիկ Եղիազարյանը հանդիսանում է «ՔՅՑ ՓԱՐԹՆԸ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ:

Ընկերության տնօրենների խորհրդի անկախ անդամ Թաթուլ Մովսիսյանը հանդիսանում է «ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն:

գ. Թողարկողի և թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախման դեպքեր չկան:

Կառավարման մարմինների գործունեությունը

1. Ընկերությունում աուդիտի կոմիտե չի ստեղծվել:

2. Հայաստանի Հանրապետությունում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքները, որոնք արտացոլված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ «Կորպորատիվ կառավարման կանոնադրքում» գրեթե պահպանված են Ընկերությունում: Ավելին Ընկերությունը այդ սկզբունքները արտացոլել է Ընկերության հետևյալ ներքին իրավական ակտերում՝

- «ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Կորպորատիվ Կառավարման Կանոնագիրք,
- «ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Կորպորատիվ Վարքագծային կանոններ,
- «ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի Ռիսկերի կառավարման կանոնակարգ,
- «ՇԵՆ ՀՈՒԴԻՆԳ» ՓԲԸ-ի շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման կանոնակարգ:

Հսկող անձինք

Ընկերության միակ ուղղակիորեն հսկող անձը հանդիսանում է Ընկերության 99.9% բաժնետոմսերի սեփականատեր Մամվել Բեգլարյանը (անձնագիր՝ AM 0522220, հասցե՝ Երևան, Վահագնի թաղ., Արվա փող., տուն11) և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը, որը Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերն է: Ընկերությունը չի գտնվում որևէ անուղղակի հսկողության տակ:

Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

1. Պատմական ֆինանսական տեղեկատվություն

2013-2014թթ անկախ աուդիտորի կողմից հաստատված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացությունները (պատճենները) ներկայացված են ազդագրի 40-104 էջերում:

2. Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

2015 թվականի 1-ին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են սույն ազդագրի 105-108 էջերում:

3. Թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2015 թվականի հունիսի 30-ից մինչև ազդագրի ներկայացման պահը ընկերության ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

4. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Վերջին մեկ տարվա ընթացքում Ընկերության ներգրավվածությամբ միակ վարույթը ներկայացված է ստորև բերվող աղյուսակի վերջին տողում՝

	Հայցվոր	Պատասխանող	Հայցապահանջը	Դատական ակտի կայացման և ուժի մեջ մտնելու օրը	Արդյունքը
1.	«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	Հույս և Իրավունք ՔԻ	Պարտքի մարդ գումարը՝ 1,632,502 և 0.05%-ով հաշվարկված տույժի ընդհանուր գումարը կազմում է 194.742,4 / ընդհանուր՝ 1,827,244. ՀՀ դրամ	ԵԱՆԳ/0208/03/12 04.04.2012թ.	բռնագանձվել է 1,827,244. ՀՀ դրամ:
2.	«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	Արմինե և Ամեն Մելակյան Երաշխավորներ	1,827,244. ՀՀ դրամ:	ԵԱՆԳ/1342/08/03/12 11.02.2013թ.	բռնագանձվել է բռնագանձվել է 1,827,244. ՀՀ դրամ
3.	«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	«Դադշին» ՍՊԸ	Պարտքի մարդ գումարը՝ 2.502.800 ՀՀ դրամը և 0.05%-ով հաշվարկված տույժի ընդհանուր գումարը կազմում է 668.192.3 ՀՀ դրամ:	ԵԱԲԳ /0431/02/12 26.03.2012թ..	բռնագանձվել է 2.502.800 ՀՀ դրամը և 0.05%-ով հաշվարկված տույժի ընդհանուր գումարը կազմում է 668.192.3 ՀՀ դրամ:
4.	«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	«ՄԱԲՍԻՍՈՒՍ-ԱԼՖԱ» ՍՊԸ	Պարտքի մարդ գումարը՝ 768,300.74 ՀՀ դրամ և և 0.05%-ով հաշվարկված տույժի ընդհանուր գումարը կազմում է 63,751 ՀՀ դրամ		հետախուզվում է
6.	«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	«Թանաձոր» ՍՊԸ	5.109.207 ՀՀ դրամ գումարի չափով վճարման փաստաբանական պահանջ է ուղարկվել:	բավարարվել է կայացել է 3 նիստ	Մասնակի վճարվել է
7.	«Շեն Կոնցեռն» ՓԲԸ	«Թանաձոր» ՍՊԸ-ի երաշխավորներ Վահե դադաշյան Էդգար Սամաճյան	5.500.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման	Հաշտության համաձայնագիր	պետք է վճարի 01.08.2013թ. անձնական գույքերը արգելանքի տակ են
8.	«Լեզվի տեսչություն»	«Շեն կոնցեռն» ՓԲԸ-ի տնօրեն Պապ Բաղդյան	400.000 ՀՀ դրամ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին	նշանակվել է դատական նիստ 11.04.2013թ.կայացել 8 նիստ	Մերժվել է
9	«Շեն Հոլդինգ ՓԲԸ	«ԹԻ ԹԻ ԷՅ Քոնսալթինգ» ՓԲԸ	5.583.012 /հինգ միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար տասներկու/ ՀՀ դրամ գումարի չափով	26.06.2013թ. Հաշտության համաձայնագիր	Վճարվել է
10	«Շեն Հոլդինգ ՓԲԸ	«Բեյզիվ Կոնստ» ՍՊ	15.960.000 ՀՀ դրամ	16.07.2013թ. Հաշտության համաձայնագիր	15.960.000 պետք է վճարի 01.12.2013թ.
11	«Շեն Հոլդինգ ՓԲԸ	«Չիլինգարյան Դիզայն Քոնսթրաքշն» ՍՊԸ	26,780,820 ՀՀ դրամ գումարի չափով	14.01.2013թ. Հաշտության համաձայնագիր	վճարվել է
12	«Շեն Հոլդինգ ՓԲԸ	«Հայբիզնես քանկ» ՓԲԸ	70.000.000 մլն ՀՀ դրամ երաշխիքային գումարի պահանջ	2013թ. հուլիսին	վճարվել է

13	«Շեն Հողինգ ՓԲԸ»	«Հայկ Արշին» ՍՊ ընկերություն	76.386.225 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջ:	վարույթ է ընդունվել 17.10.2013թ.	Վճարվել է
14	«Շեն Հողինգ ՓԲԸ»	«ՄՍ Շինարար» ՓԲԸ	23.000.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջ:	սանձակության վարույթ կնքվել է հաշտության համաձայնագիր	Վճարվել է մասնակի
15	«Շեն Հողինգ ՓԲԸ»	ՀՀ ԱՆ Աշխատակազմի աշխատանքի պետական տեսչություն	9.000.000 ՀՀ դրամ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին	դատարանի վճիռը հրապարակվելու է 30.11.2015թ.	

Լրացուցիչ Տեղեկատվություն

1. Կանոնադրական կապիտալը

ա. Ընկերության կանոնադրական կապիտալը 30.11.2015թ. կազմել է 5.464.000.000 ՀՀ դրամ:

բ. Ընկերության հայտարարված հասարակ բաժնետոմսերի քանակը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) հատ:

գ. Ընկերության կողմից թողարկված 478100 հատ սովորական և 68300 հատ արտոնյալ անվանական բաժնետոմսերը ամբողջությամբ տեղաբաշխված են և վճարված:

դ. Թողարկված հասարակ և արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ է:

2. Կանոնադրություններ

Թողարկողի հիմնական նպատակը գործունեության արդյունքում շահույթի ստացումն է:

Ընկերության գործունեության նպատակներն են

- 1) Ընկերության արժեքի շարունակական աճի ապահովումը,
- 2) Ընկերության տնտեսական կայունության, հասարակության սոցիալական բարեկեցության և բնապահպանական կայունության համակցումը,
- 3) Ընկերության արտադրանքի և ծառայությունների բարձր որակական հատկանիշների պահպանումը և հաճախորդների բավարարվածության բարձր մակարդակի ապահովումը,
- 4) Տեխնոլոգիական նոր լուծումների և նորամածությունների կիրառումը,
- 5) Ընկերության կորպորատիվ կառավարման պրակտիկայի շարունակական կատարելագործումը:

Ընկերության գործունեության տեսակներն են

- 1) Շինարարական մետաղական և ոչ մետաղական իրերի արտադրությունը,
- 2) Շինանյութերի (ներկերի, բետոնե քարերի, սալիկների, մածիկների և կապակցող նյութերի) արտադրությունը,
- 3) Պինդ, հեղուկ և գազանման վառելանյութի մանրածախ և մեծածախ առևտուրը,
- 4) Կերամիկայի, պաստառների, սանտեխնիկայի, տեքստիլի, դեկորատիվ ներկերի ներկրումը և վաճառքը,
- 5) Շինությունների արտաքին և ներքին հարդարումը,
- 6) Շինանյութերի մեծածախ և մանրածախ առևտուրը,
- 7) Շինարարության իրականացումը քաղաքաշինության բնագավառում,
- 8) Շինարարության իրականացումը տրանսպորտային,
- 9) Օգտակար հանածոների արդյունահանումը և այլն:

Վերոնշյալ տեղեկությունը կարելի է գտնել Ընկերության կանոնադրության 1.4 և 1.5 կետերում:

Էական պայմանագրերը

Ընկերությունը իր բնականոն գործունեությունից դուրս կնքել է միայն վարկային պայմանագրեր, որոնք

հիմնականում նպատակաուղղված են եղել գործունեության զարգացմանը: Ընկերության կնքած և գործողության մեջ գտնվող էական վարկային պայմանագրեր ներկայացված են ստորև:

Վարկատու	Վարկի պայմանագրի համարը	Վարկի պայմանագրի կնքման ամսաթիվը	արժույթը	Գումարը արժույթով	Տոկոսա-դրույքը	Վերջնա-ժամկետը
Համահայկական Բանկ ԲԲԸ	ՎՊ 04/13	20.08.2013թ.	AMD	636,300,000	12%	20.08.2023թ.
ՎՋԵԲ	DTM 45065	22.12.2014թ.	USD	7,300,000	6.77%	20.12.2021թ.
ՎՋԵԲ	DTM 45065	22.06.2015թ.	USD	2,000,000	6.77%	20.06.2022թ.
Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան	LGL20141406	19.11.2014թ.	USD	3,300,000	9%	25.11.2021թ.
Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան	LGL20141407	19.11.2014թ.	EUR	1,600,000	7%	25.11.2021թ.
Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան	LGL20141408	19.06.2015թ.	USD	2,500,000	9%	08.11.2021թ.
Արդշինբանկ ՓԲԸ	ԲՎՊ15/112-01	22.09.2015թ.	USD	550,000	10%	23.06.2016թ.

Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը:

Ազդագրում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք (եզրակացություն, հաշվետվություն, գնահատման ակտ և այլն): Ազդագրում ներառված չէ տեղեկություն, որի համար աղբյուր են հանդիսացել երրորդ անձիք:

Այլ տեղեկատվություն

Սույն ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ընկերությունը պարտավորվում է սույն ազդագիրը, Ընկերության կանոնադրությունը, ատղիտորական եզրակացությունները, հաշվետվությունները, որոնք օգտագործվել են սույն ազդագրում, ինչպես նաև փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ գնահատումները, վերլուծական նյութերը և այլ էական տեղեկատվությունը, որոնք կարող են ի հայտ գալ հետագայում առնվազն Էլեկտրոնային եղանակով մատչելի դարձնել հանրությանը՝ իր կայքում www.shenholding.com հրապարակման միջոցով: